

**ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ, ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՅՈՒՐՈ
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԶԵԿՈՒՅՑ 2018Թ.**

ՀԱՅԱՍՏԱՆ

Հրատարակվել է 13 մարտի 2019թ.

ԱՄՓՈՓԻՉ ԱԿՆԱՐԿ

Ըստ Սահմանադրության Հայաստանը խորհրդարանական հանրապետություն է, որն ունի ունի միապալատ օրենսդիր կառույց՝ Ազգային ժողով (խորհրդարան): Կառավարությունը ղեկավարում է խորհրդարանի կողմից ընտրված վարչապետը, իսկ նախագահը, որը նույնպես ընտրվում է խորհրդարանի կողմից, ունի առավելապես արարողակարգային դերակատարում: Դեկտեմբերի 9-ի արտահերթ խորհրդարանական ընտրություններում «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը ներկայացնող գործող վարչապետ Նիկոլ Փաշինյանի ղեկավարած «Իմ քայլը» դաշինքը ստացավ քվեների 70 տոկոսը և գերակշիռ մեծամասնություն խորհրդարանում: Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) հովանու ներքո իրականացված միջազգային ընտրական դիտորդական առաքելության ղեկավարների 10-ի նախնական գնահատմամբ «խորհրդարանական ընտրություններն անցկացվել են հիմնարար ազատությունների պահպանմամբ և վայելել են հանրության լայն շրջանակների վստահությունը, ինչը պետք է պահպանվի ընտրական հետագա բարեփոխումների ժամանակ»:

Քաղաքացիական իշխանությունները պահպանել են արդյունավետ վերահսկողություն անվտանգության ուժերի նկատմամբ:

Նիկոլ Փաշինյանը նախ խորհրդարանի կողմից ընտրվեց մայիսի 8-ին, երկրում ապրիլ-մայիս ամիսներին տեղի ունեցող առավելապես խաղաղ համազգային բողոքի ակցիաներից հետո, որոնք ստացան «Թավշյա հեղափոխություն» որակումը: Նոր կառավարությունը մի շարք քննություններ սկսեց կապված համակարգային պաշտոնեական կոռուպցիայի հետ, իսկ դեկտեմբերի 9-ին երկրում տեղի ունեցան առաջին իրապես մրցակցային ընտրությունները:

Մարդու իրավունքների հետ կապված առավել նշանակալի խնդիրները ներառել են խոշտանգումներ, ծանր և կյանքի համար վտանգավոր բանտային պայմաններ, կամայական ձերբակալություն և կալանք, ոստիկանական բռնություն լրագրողների դեմ, անվտանգության ուժերի ֆիզիկական միջամտություն հավաքների ազատության հարցում, քաղաքական մասնակցության սահմանափակումներ, կառավարության համակարգային կոռուպցիա, բռնությամբ կամ բռնության սպառնալիքներով ուղեկցվող հանցանքներ ընդդեմ լեսբի, գեյ, բիսեքսուալ, տրանսգենդեր և ինտերսեքս (ԼԳԲՏԻ) անձանց, ոչ մարդկային և նվաստացուցիչ

վերաբերմունք հաստատություններում գտնվող հաշմանդամություն ունեցող անձանց, այդ թվում՝ երեխաների հանդեպ և երեխայի աշխատանքի վատթարագույն ձևեր:

Նոր կառավարությունը ձեռնարկել է քայլեր չարաշահումների քննության և դրանց համար պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ, հատկապես՝ կառավարության բարձր օղակներում և իրավապահ կառույցներում: Հուլիսի 3-ին Հատուկ քննչական ծառայությունը (ՀՔԾ) 8 քաղաքացիական անձի և 2 ոստիկանի կյանք խլած 2008թ. հետընտրական բախումներում իրենց ունեցած դերակատարման համար մեղադրանք ներկայացրեց նախկին կառավարության որոշ բարձրաստիճան պաշտոնյաների:

ՄԱՍ 1. ՀԱՐԳԱՆՔ ԱՆՁԻ ԱՆՁԵՌՆՄԻՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ

ա) Կամայական ձևով կյանքից զրկելը կամ այլ անօրինական կամ քաղաքական սպանություններ

Պետության կամ պետության գործակալների կողմից կամայական և ապօրինի սպանությունների մասին հաղորդումներ չեն եղել:

Հասարակական կազմակերպությունները (ՀԿ) մտահոգություններ են հայտնել, որ բանակում գրանցված մահվան դեպքերի մասին ժամանակին և ճշգրիտ տեղեկատվություն չի ապահովվել: «Խաղաղության երկխոսություն» և «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» ՀԿ-ների բանակում ծառայության հետ չկապված մահվան դեպքերի անկախ (և առանձին) մոնիտորինգի տվյալներով տարվա առաջին կեսում գրանցվել է 24 դեպք: «Խաղաղության երկխոսություն» ՀԿ-ի տեղեկատվություն տրամադրելու խնդրանքին ի պատասխան պաշտպանության նախարարության կողմից տրամադրված տեղեկությունների համաձայն այդ նույն ժամանակահատվածում գրանցվել էր այդպիսի 31 դեպք: Իրավապաշտպան ՀԿ-ները նկատում էին, որ տարիներ շարունակ բանակում գրանցված մահվան դեպքերի վերաբերյալ տեղեկատվության խնդրանքները մերժելուց հետո, մայիսյան փոփոխություններից հետո պաշտպանության նախարարությունը սկսել է ավելի բաց արձագանք ապահովել այդ հարցում: Այնուհանդերձ, կառավարության և ՀԿ-ների ներկայացրած թվերի անհամապատասխանությունը, որը մասամբ նաև պայմանավորված է այն հանգամանքով, թե պաշտպանության նախարարության ու քաղաքացիական հասարակության տեսանկյունից որոնք են համարվում զինվորական մահվան դեպքեր, շարունակել է նպաստել պաշտոնական տեղեկատվության հանդեպ ընդհանուր անվստահությանը:

Մի բնութագրական օրինակում մայիսի 6-ին պաշտպանության նախարարության կողմից հաղորդում է ներկայացվել Տավուշի մարզում գտնվող գորամասերից մեկում հրագենային վնասվածքից մահացած ժամկետային զինծառայող Լևոն Թորոսյանի վերաբերյալ: Քննչական կոմիտեի 6-րդ կայազորային քննչական բաժնի կողմից մահը որակվել էր որպես ինքնասպանություն, իսկ Թորոսյանին վիրավորանք հասցնելու համար մեղադրանք էր ներկայացվել Թորոսյանի ծառայակից Վալոդյա Հոխիկյանին. Հոխիկյանն իրեն մեղավոր է ճանաչել: «Խաղաղության երկխոսություն» ՀԿ-ի փորձագետ Ռուբեն Մարտիրոսյանը, որը ներկայացնում է տուժողի ընտանիքին, ներկա է գտնվել դիակի գննությանը և նկատել է արյունազեղում ամորձիների շրջանում և քերծվածքներ արմունկների շրջանում, որոնք առաջացել են մահվանից կարճ ժամանակ առաջ: Ըստ Մարտիրոսյանի այս և մի շարք այլ փաստեր թույլ են տվել եզրակացնել, որ Թորոսյանը սպանվել է, իսկ քննիչները վկաների նկատմամբ ճնշումների ու ապացույցների կեղծման միջոցով կոծկել են մահվան իրական հանգամանքները: Օգոստոսի 24-ին ՀՔԾ-ը գործ է հարուցել Մարտիրոսյանի պնդումների հիման վրա: Ըստ «Խաղաղության երկխոսություն» ՀԿ-ի սա առաջին դեպքն էր վերջին տարիների ընթացքում, երբ մահվան գործի քննությանը զուգահեռ հարուցվել է գործ քննչական մարմնի կողմից օրենքի հնարավոր խախտումները քննելու նպատակով: Երկու քննություն էլ տարեվերջի դրությամբ դեռևս ընթացքի մեջ էին:

Մայիսի 24-ին վարչապետ Փաշինյանն աշխատանքից ազատեց զինված ուժերի գլխավոր շտաբի պետ Մովսես Հակոբյանին: Բանակում ծառայության հետ կապ չունեցող մահվան դեպքերով մահացած զինծառայողներից շատերի ընտանիքները, որոնք շարունակում էին պահանջել մահվան հանգամանքների քննություն, պնդում էին, որ Մովսեսյանն այդ մահվան գործերը կոծկելու հարցում զգալի դերակատարում ուներ: Ըստ լրատվամիջոցներում տեղ գտած հրապարակումների նախկինում գրանցված ծառայության հետ կապ չունեցող մահվան դեպքերից մի քանիսով գործերը վերաբացվել են:

Փաշինյանի կառավարությունը նոր լիցք հաղորդեց 2008թ. նախագահական ընտրություններից հետո տեղի ունեցած դեպքերի մեղավորների բացահայտմանը, որի պատճառով կյանքից զրկվել էին 8 քաղաքացիական անձ և 2 ոստիկան: Ըստ կառավարության հուլիսի 3-ից սկսած մինչև ուշ աշուն ՀՔԾ-ը մի քանի քրեական գործ է հարուցել այդ դեպքերը վերստին քննելու համար: Քրեական գործերում կան սահմանադրական կարգի տապալման, պաշտոնական լիազորությունները չարաշահելու և անցնելու, խոշտանգումների, կաշառք առաջարկելու մեջ հանցակցելու, պաշտոնական խարդախության և 2008թ. հետընտրական դեպքերի հետ կապված ապացույցները կեղծելու մեղադրանքներ: Այս գործերով կասկածյալ համարվող հայտնի դեմքերից են պաշտպանության նախկին նախարար Միքայել Հարությունյանը, պաշտպանության նախկին փոխնախարար Յուրի Խաչատուրովը, նախագահի աշխատակազմի նախկին ղեկավար Արմեն Գևորգյանը և նախկին նախագահ Ռոբերտ Քոչարյանը: Հուլիսի 27-ին Քոչարյանին 2008թ. մարտի 1-ի դեպքերի հետ կապված մեղադրանք

ներկայացվեց Քրեական օրենսգրքի 300.1 հոդվածով, այն է՝ սահմանադրական կարգի տապալում: Օգոստոսի 13-ին վերաքննիչ դատարանի վճռով նա ազատ արձակվեց նախնական կալանքից: Վճռաբեկ դատարանի վճռով, նրան ներկայացված մեղադրանքների հետ կապված նախագահական անձեռնմխելիության չկիրառելիության հիմքով, նա դեկտեմբերի 7-ին կրկին ձերբակալվեց: Տարեվերջի դրությամբ գործերի քննությունը դեռ ընթացքի մեջ էր:

Մեպտեմբերի 15-ից 20-ը կատարած այցի ավարտին Մարդու իրավունքների հարցերով Եվրախորհրդի հանձնակատար Դունյա Միլատովիչը նշեց, որ կառավարությունն ի վերջո քայլեր է ձեռնարկում 10-ը զոհերի մեղավորների բացահայտման ու պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ, սակայն ընդգծեց, որ « այս գործընթացը պետք է իրականացվի շատ զգույշ կերպով և պետք է խստորեն համապատասխանի իրավունքի գերակայության, դատական իշխանության անկախության, դատավարության թափանցիկության և արդար դատաքննության երաշխավորման սկզբունքներին, որպեսզի բացառվի ենթադրյալ վրեժի քաղաքականության կամ ընտրովի արդարադատության ցանկացած մեղադրանք»:

Անջատողականները, Հայաստանի աջակցությամբ, շարունակել են վերահսկել Լեռնային Ղարաբաղի մեծ մասը և յոթ հարակից ադրբեջանական տարածքներ: Լեռնային Ղարաբաղի վերջնական կարգավիճակի հարցը շարունակում է մնալ միջազգային միջնորդական ջանքերի օրակարգում՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակում, որտեղ համանախագահում են Ֆրանսիան, Ռուսաստանը և Միացյալ Նահանգները: Բախումները շփման գծում շարունակվել է, սակայն Դուռանքում Հայաստանի և Ադրբեջանի ղեկավարների հոկտեմբերին տեղի ունեցած հանդիպումից հետո դրանք դարձել են ավելի սակավ: Կրկնվող կրակոցների ու արկակոծման հետևանքով եղել են զոհեր և վիրավորներ զինծառայողների և քաղաքացիական անձանց շրջանում: 2016թ. ապրիլի բախումների ալիքից հետո հակամարտության կողմերը Մարդու իրավունքների եվրոպական դատարանին (ՄԻԵԴ) բողոքներ են ներկայացրել, որտեղ միմյանց մեղադրում են վայրագություններ թույլ տալու մեջ: ՄԻԵԴ-ում գործերը դեռևս ընթացքի մեջ են:

բ) Անհետացումներ

Իշխանությունների կողմից կամ անունից անհետացումների մասին հաղորդումներ չեն եղել:

գ) Խոշտանգումներ և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունք կամ պատիժ

Օրենսդրությունն արգելում է նման գործելակերպերը: Այնուհանդերձ, եղել են հաղորդումներ, որ անվտանգության ուժերի ներկայացուցիչներն արգելանքի տակ գտնվող անձանց ենթարկել են խոշտանգումների կամ թույլ են տվել այլ ոտնձգություններ: Ըստ մարդու իրավունքների հարցերով զբաղվող փաստաբանների, թեպետ քրեական օրենսգիրքը սահմանում ու քրեորեն պատժելի արարքների շարքին է դասում խոշտանգումը, սակայն այն չի քրեականացնում ոչ

մարդկային և նվաստացուցիչ վերաբերմունքը: Նման գործելակերպ ունեցող պաշտոնյաների դատապարտման դեպքեր չեն եղել, սակայն եղել են մի շարք հաղորդումներ այդ մեղադրանքներով ընթացող քննությունների մասին:

Ոստիկանության բռնությունները կասկածյալների նկատմամբ նրանց ձեռքարկության, բերման ենթարկելու կամ հարցաքննության ընթացքում շարունակել են մնալ որպես զգալի խնդիր, հատկապես առավելապես խաղաղ անցած «թավշյա հեղափոխության» շրջանում: Օրինակ՝ ապրիլի 23-ին ոստիկանները ծեծի էին ենթարկել Երևանի պետական բժշկական համալսարանի դասախոս, բժիշկ Հայկ Հովհաննիսյանին: Ըստ Հովհաննիսյանի նա փորձել էր պաշտպանել ուսանողներին ոստիկանների բռնություններից, երբ 5-6 ոստիկան իրեն դուրս էին քաշել տաքսու միջից և գետին զցելով սկսել էին դեմքին ու մարմնին հարվածներ տեղալ, որի հետևանքով նա ստացել էր մարմնական վնասվածքներ, ուղեղի ցնցում և այտուցի կոտրվածք: Բռնությունները տեղի էին ունենում ոստիկանական բաժանմունքներում, քանի որ դրանք, ի տարբերություն բանտերի կամ ձեռքարկվածների պահման վայրերի, չեն վերահսկվում հասարակական դիտորդների կողմից: Ըստ դիտորդների ոստիկանությունը ձեռքարկությունն օգտագործում էր որպես պատիժ: Քրեական արդարադատության մարմինները դատապարտումների համար հիմք են ընդունել խոստովանություններն ու հարցաքննությամբ ձեռք բերված տեղեկությունները: Ըստ իրավապաշտպան-փաստաբանների ոստիկանության հարցաքննությունների ժամանակ վատ վերաբերմունք թույլ չտալու համար չեն եղել բավարար ընթացակարգային երաշխիքներ, ինչպիսիք են օրինակ՝ որպես վկա ոստիկանություն կանչված անձանց համար փաստաբանի հասանելիության ապահովումը, ինչպես նաև ուժով կամ ընթացակարգային խախտմամբ ձեռք բերված իրեղեն ապացույցների անընդունելիությունը:

Ըստ կառավարության վիճակագրության 2015թ. քրեական օրենսգրքում խոշտանգումների նոր սահմանման ընդունումից հետո խոշտանգումների մեղադրանքով ընդամենը երկու գործ է ուղարկվել դատարան:

Իրավապաշտպան-փաստաբանների և Մարդու իրավունքների պաշտպանի (ՄԻՊ) գրասենյակի կողմից ապրիլյան ցույցերի ժամանակ արձանագրվել են ցուցարարների, քաղաքացիական անձանց, լրագրողների հետ կապված մարդու իրավունքների բազմաթիվ խախտումներ, որոնց թվում տեղ են գտել նաև ոստիկանների, քաղաքացիական հագուստով իրավապահների և հանցավոր խմբերի կողմից անհամաչափ ուժի կիրառման և ծեծի ենթարկելու մասին հաղորդումներ: Առողջապահության նախարարության տվյալներով ապրիլի 13-ից 23-ը բուժօգնության համար դիմել է 127 քաղաքացի:

Ըստ պաշտոնական տեղեկատվության Քննչական կոմիտեն ապրիլի 13-ից 23-ը տեղի ունեցած բռնության միջադեպերով հարուցել է 25 քրեական գործ: 25 գործից 6-ը, որոնցով մեղադրվում է 9-ը հոգի, ուղարկվել են դատարան. մեղադրյալներից մեկն անդրանիկ Իսոյանն է, Ազգային ժողովի նախկին պատգամավոր Միհրան Պողոսյանի օգնականը: Գործերից մեկը կասեցվել է,

իսկ 14 գործ միացվել է այլ գործերի: Շարունակվում էր 4 գործերի քննությունը՝ 19 անձի նկատմամբ, որոնց թվում էին Մասիսի քաղաքապետն ու փոխքաղաքապետը: Մասիսի քաղաքապետ Դավիթ Համբարձումյանին մեղադրանք էր առաջադրված ապրիլի 22-ի զանգվածային անկարգությունների կազմակերպման համար, երբ մի խումբ բժշկական դիմակներ կրող անձինք քարերով, մահակներով ու էլեկտրաշոկերով հարձակվել էին խաղաղ ցուցարարների վրա: Համբարձումյանին նաև խուլիգանության մեղադրանք է առաջադրվել նույն օրը տեղի ունեցած մի այլ բռնի միջադեպի հետ կապված, որտեղ կիրառվել է նաև հրազեն:

Բացի այդ, ՀՔԾ-ի կողմից քննվել է ապրիլի 13-ից 23-ը ցուցարարների դեմ բռնության կիրառման 2 գործ: Այս գործերով, որոնք տարեվերջի դրությամբ դեռ ընթացքի մեջ էին, սուստոյների թիվը 164 հոգի էր, այդ թվում՝ 13 լրագրող:

Լրագրողի մասնագիտական գործունեությանը խոչընդոտելու մեղադրանքով դատարան է ուղարկվել 2 քրեական գործ Աբովյանի շրջանի 3 ոստիկանների՝ ոստիկանության Կոտայքի մարզային վարչության Կոտայքի բաժնի պետ Արսեն Արզումանյանի և բաժնի օպեր-լիազորներ Արեգ Թորոսյանի և Արսեն Թորոսյանի դեմ: Ոստիկանության ներքին գործերի նախկին հրամանատար, գեներալ-լեյտենանտ Լևոն Երանոսյանին մեղադրանք է առաջադրվել պաշտոնական լիազորություններն անցնելով ցուցարարների նկատմամբ ծանր հետևանքների հանգեցրած բռնություն կիրառելիս ունեցած իր դերակատարման համար: Ապրիլի 13-ից 23-ը ոստիկանների պահվածքի հետ կապված ոստիկանությունում կատարվել է 22 ներքին քննություն:

Մայիսի 13-ին ՀՔԾ-ի կողմից խոշտանգումներ թույլ տալու մեղադրանք առաջադրվեց ոստիկանության Երևան քաղաքի վարչության ուղեկցող գումարտակի հրամանատար Արմեն Ղազարյանին՝ 2017թ. հունիսին վիճաբանության ժամանակ ոստիկանության կողմից «Մասնա Ծռեր» զինված խմբի 4 անդամների ծեծի ենթարկելու ժամանակ իր ունեցած դերակատարման համար: Ծեծի հետևանքով մեղադրյալների մոտ առաջացել էին կտրվածքներ և կապտուկներ դեմքի, գլխի, որովայնի, մեջքի և ոտքերի շրջանում: Տարեվերջի դրությամբ քննությունը դեռ ընթացքի մեջ էր:

«Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ-ի սեպտեմբերի 24-ի հայտարարության համաձայն ՀՔԾ-ը կասեցրել է 2016թ. Էրեբունում ոստիկանական գնդի գրավմանն աջակցած ցուցարարների դեմ բռնություն գործադրելու գործի քննությունը:

Մարտի 21-ին ՄԻՊ գրասենյակը ներկայացրեց արտահերթ զեկույց հոգեբուժական հաստատությունների իրավիճակի վերաբերյալ արձանագրելով մարդու իրավունքների խախտումներ: Այդ խախտումները ներառում էին. հարկադիր բուժման հետ կապված իրավական բացեր, խնդիրներ կապված ժամկետանց դեղորայքի հետ, այլընտրանքային բուժման տարբերակների բացակայություն, զսպման միջոցների անհարկի կիրառում, նեղ մասնագետների բացակայություն, անհետաձգելի հոգեբուժական հիվանդանոցային

բժշկական օգնության բացակայություն, գերբնակեցում, խտրականություն, ոչ համարժեք կենցաղային և սանիտարահիգիենիկ պայմաններ, ոչ պատշաճ սնունդ, ֆիզիկական ակտիվության հնարավորության բացակայություն և այլն: 2017թ. աշնանը երկիր կատարած այցից հետո ապրիլի 23-ին հոգեկան և ֆիզիկական առողջության բարձրագույն ստանդարտներից օգտվելու յուրաքանչյուրի իրավունքի հարցերով ՄԱԿ-ի հատուկ զեկուցող Դահինուս Պուրասը հրապարակեց իր զեկույցը: Ըստ զեկույցի երկրի հոգեկան առողջության համակարգը պարունակում էր հնացած մոդելների և գործելաոճերի տարրեր, այդ թվում՝ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց հեշտ ու հաճախակի փոխադրումը հիվանդանոցային բուժման, դեղերի չափից ավել գործածումը և այս «քրոնիկ պացիենտների» երկարաժամկետ մեկուսացումը: Հատուկ զեկուցողը նշել էր, որ մի շարք հաստատություններում պացիենտները երկար ժամկետով մեկուսացման մեջ են գտնվում, երբեմն 10-ից 15 տարի, ոչ այն պատճառով, որ հիվանդանոցային խնամքի կարիք ունեն, այլ քանի որ համայնքային մակարդակում բացակայում են խնամքի համապատասխան հաստատությունները:

Ըստ գիտվոր դատախազության 2017թ. և 2018թ. առաջին 9 ամիսների ընթացքում հոգեբուժական հաստատություններում մահացել է 84 հոգի: Դեպքերից 80-ի պարագայում մահը վրա է հասել տարբեր հիվանդությունների պատճառով. հանցակազմի բացակայության հիմքով դրանց վերաբերյալ քրեական գործեր չեն հարուցվել: Մահվան դեպքերից 3-ի պարագայում, քրեական գործ է հարուցվել, որոնցից մեկն ինքնասպանության հատկանիշներով, սակայն գործերից 2-ն ավելի ուշ կարճվել են հանցակազմի բացակայության հիմքով: Երրորդ գործով քննությունն ընթացքի մեջ է:

Եվրախորհրդի Խոշտանգումների կանխարգելման կոմիտեն (ԽԿԿ) 2016թ. երկիր կատարած այցի մասին հաշվետվության մեջ նշել էր, որ երկու հոգեբուժական կլինիկաների զգալի թիվ կազմող պացիենտներն, ըստ էության, գտնվում էին անազատության մեջ էին: Թեպետ նրանք ստորագրել էին համաձայնագիր կամավոր այդ հաստատություններում գտնվելու մասին, սակայն պացիենտներն այլևս չէին ցանկանում մնալ այդ հիվանդանոցներում:

Բանտերի ու կալանավայրերի պայմանները

Բանտային պայմանները բնութագրվում էին վատ սանիտարահիգիենիկ վիճակով, ոչ համարժեք բուժսպասարկմամբ և համակարգային կոռուպցիայով. քրեակատարողական հիմնարկների գերբնակեցվածությունը բանտերի մակարդակում այլևս խնդրահարույց չէր, գրեթե լուծված էր նաև խցերի մակարդակում, սակայն որոշ դեպքերում պայմանները խիստ ծանր էին և կյանքի համար վտանգավոր: Քրեակատարողական հիմնարկներում, ընդհանուր առմամբ չեն եղել հարմարություններ հաշմանդամություն ունեցող բանտարկյալների համար:

Ֆիզիկական պայմաններ. Ըստ դիտորդների, լրատվական հրապարակումների և ըստ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող Հասարակական դիտորդական խմբի (ՀԴԽ) արտահերթ զեկույցների՝ տարվա ընթացքում քրեակատարողական հիմնարկներում իրավիճակը շարունակել է մնալ այնպես, ինչպես նկարագրված էր ԽԿԿ-ի 2016թ. հաշվետվության մեջ: ԽԿԿ-ն արձանագրել էր, որ Նուբարաշենում շարունակում են անընդունելի մնալ պահման նյութական պայմանները: Ըստ ՀԴԽ-ի Նուբարաշենի որոշ խցերում պահման պայմանները խոշտանգման և անմարդկային ու նվաստացուցիչ վերաբերմունքի դրսևորում են: Ըստ ՀԴԽ-ի շատ խցեր խոնավ էին, բորբոսով պատված, չունեին բավարար լուսավորություն ու օդափոխություն, կեղտոտ էին և դրանցում միջատներ էին վիստում: Բանտարկյալներից շատերի համար ջուրը հասանելի էր միայն որոշակի ժամերի: Մննդամթերք, անկողնային և հիգիենայի պարագաներ բանտարկյալները ստացել են իրենց ընտանիքներից: Ըստ ՀԴԽ-ի մյուս քրեակատարողական հիմնարկներում ևս նմանատիպ իրավիճակ է տիրել:

Իրավապաշտպան դիտորդները և ՀԴԽ-ը մտահոգություններ են հնչեցրել երկրի ամենանոր քրեակատարողական հիմնարկի՝ «Արմավիր» ՔԿՀ-ի ֆիզիկական պայմանների մասին: Այստեղ չկա ո՛չ օդափոխության, ո՛չ էլ հովացման համակարգ: ՀԴԽ դիտորդները, որոնք այցելել էին հուլիսի 13-ին, արձանագրել էին, որ խցերի ներսում օդի ջերմաստիճանը 45°C (113° ըստ Ֆարենհայտի) էր և չկար մշտական ջրամատակարարում: Ճարտարապետական նախագծով նախատեսված օդափոխության ու հովացման համակարգը, ըստ ՀԴԽ-ի, հանվել է սկզբնական նախագծից միջոցների սղության պատճառով:

Ըստ ՀԴԽ-ի քրեակատարողական հիմնարկներում բանտարկյալների մահվան հետ կապված անպատժելիությունը շարունակում էր մնալ մարդու իրավունքների ամենանշանակալի խնդիրներից: Ըստ բնութագրական մի օրինակի արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության հաղորդման համաձայն օգոստոսի 11-ին «Արմավիր» ՔԿՀ-ի իր խցում գտել էին Մոլդովայի քաղաքացի Վասիլ Գրույային՝ իր տաբատի գոտիով կախված վիճակում: Ըստ քրեակատարողական ծառայության նա կալանավորված անձ էր և հիմնարկ էր ընդունվել օգոստոսի 6-ին, դրսևորում էր ագրեսիվ վարքագիծ ընդունված օրվանից և արել էր ինքնավնասման փորձ: Նրա վիճակը կայունացնելու նպատակով թույլատրվել էր, որ մայրն այցելի նրան և բանտի հոգեբանները երեք օրերի ընթացքում աշխատել են նրա հետ: Ըստ լրատվական հրապարակումների Գրույայի ընտանիքը չէր հավատում, որ նա կարող էր ինքնասպանություն գործել, քանի որ գիտեր՝ մի քանի օրից ազատ էր արձակվելու: Լրատվամիջոցներում նաև նշում էին, որ նրա մայրը պնդում էր, թե որդուն մեկ այլ կալանավորված անձ է սպանել և որդին իրեն հայտնել է, որ իրեն սպառնացել են սպանել: Ըստ պաշտոնական տեղեկատվության դատաբժշկական փորձաքննությամբ բացահայտվել է, որ նրա մարմնին առկա էին մահվանից կարճ ժամանակ առաջ բուրձ առարկայով հասցված

բազմաթիվ վնասվածքներ: Նրա մահվան դեպքով հարուցված քրեական գործը տարեվերջին դեռ ընթացքի մեջ էր:

ՄԻՊ գրասենյակը և ՀԴԽ-ը մատնանշում էին քրեակատարողական հիմնարկներում հոգեբանական ծառայությունների բարելավման անհրաժեշտությունը: ՀԴԽ-ի կողմից հրապարակված վիճակագրության համաձայն 2011-2017թթ. քրեակատարողական հիմնարկներում գրանցվել է ինքնասպանության 27 դեպք: 2017թ. գրանցվել է ինքնավնասման 607 դեպք, իսկ 2016թ. այդ թիվը կազմում էր 879: 2017թ. ընթացքում ամենաշատ ինքնավնասման դեպքերը գրանցել են «Նուբարաշեն» և «Արմավիր» ՔԿՀ-ներում: Ըստ ՀԴԽ-ի քրեակատարողական հիմնարկների ղեկավարությունը պատշաճ կերպով չի քննել այդ գործերը և չի դիտարկել դրանցում հիմնարկի անձնակազմի մեղավորության կամ անփութության հանգամանքը: 2017թ. ՀԴԽ-ը մի քանի անգամ դիմել էր արդարադատության նախարարությանը քրեակատարողական հիմնարկ այցերի ժամանակ իրենց հետ հավելյալ հոգեբաններ ներգրավելու հարցով, սակայն մերժում էր ստացել:

Մայիսի 3-ին ՀՔԾ-ը հաղորդում ներկայացրեց, որ դատապարտյալին խոշտանգումների ենթարկելու մեղադրանք է առաջադրվել «Արմավիր» ՔԿՀ-ի մի քանի աշխատակիցների, որոնք դատապարտյալի նկատմամբ ֆիզիկական ուժ էին կիրառել, սակայն գործը կարճվեց, քանի որ իրավապահների կողմից ուժի կիրառումը գնահատվեց համաչափ:

Ըստ իրավապաշտպան կազմակերպությունների՝ շենքերի վատ ֆիզիկական պայմաններից զատ, բանտային կյանքում գերիշխել է կազմակերպված քրեական կառուցակարգ: Ըստ հաղորդումների քրեակատարողական հիմնարկների պաշտոնյաները լիազորություններ են տվել բանտային ոչ ֆորմալ հիերարխիայի վերևում գտնվող բանտարկյալների շարքից որոշ ընտրյալների (կոչվում են «նայողներ») և օգտագործել նրանց բանտարկյալների նկատմամբ վերահսկողություն իրականացնելու նպատակով:

Նախկին բանտարկյալները և բազմաթիվ իրավապաշտպան դիտորդներ ևս առաջ են քաշում քրեակատարողական հիմնարկներում համակարգային կոռուպցիայի և կաշառքների խնդիրը: Հունիսի 29-ին դատապարտյալների մի խումբ նամակ էր գրել վարչապետին՝ փաստելով, որ քրեակատարողական հիմնարկներում կոռուպցիան ամենուր է, բացառությամբ «Վարդաշեն» ՔԿՀ-ի, որը հիմնականում օգտագործվում է օտարերկրյա քաղաքացիների և նախկին պետական պաշտոնյաների համար: Նամակի հեղինակները պնդում էին, որ ամեն խուց ամսական 300.000 դրամից մինչև 600.000 դրամ (635-1.250 ԱՄՆ դոլար) կաշառք է տալիս հիմնարկի ղեկավարությանը, քրեական հեղինակություններին և այլոց:

Կային նաև հաղորդումներ բժշկական անփութության վերաբերյալ: Ըստ մի բնութագրական օրինակի փետրվարի 14-ին լրատվամիջոցներում հաղորդում եղավ 2017թ. դեկտեմբերին «Աբովյան» ՔԿՀ-ում մահացած դատապարտյալ Արեգա Ավետիսյանի մասին: Մինչ նրա մահը ՀԴԽ-ը դիմել էր, որ դատապարտյալ Ավետիսյանը հիվանդության պատճառով ազատվի

պատիժը կրելուց: Ըստ ՀԴԽ-ի Ավետիսյանն ինսուլտ էր տարել և նրա խնամքով զբաղվում էր մեկ այլ դատապարտյալ: ՀԴԽ-ի դիմումից հետո բժշկական գնմամբ եզրակացվել էր, որ առողջական վիճակով պայմանավորված ազատ արձակման հիմքեր չկային: Պատկան մարմինների կողմից հարուցվեց գործ բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների կողմից մասնագիտական պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու մեղադրանքով, որը տարեվերջի դրությամբ դեռ ընթացքի մեջ էր:

2017թ. ապրիլի «Արմավիր» ՔԿՀ-ի դատապարտյալ Հրայր Գևորգյանի մահվան գործով քննությամբ առաջընթաց չի եղել:

Քրեակատարողական հիմնարկների բուժճառայություններում շարունակվում էին պահպանվել կադրային ոչ լիարժեք համալրման, տեխնիկական զինվածության անբավարար մակարդակի և նեղ մասնագիտական բուժօգնության, այդ թվում՝ հոգեկան առողջության ծառայությունների հասանելիության հետ կապված խնդիրները: Նաև արձանագրվել է դեղորայքի լուրջ պակաս:

Ըստ ՀԴԽ-ի և իրավապաշտպան կազմակերպությունների՝ բանտերում ամենավատ պայմաններում գտնվել են ԼԳԲՏԻ անձինք: Նրանք խտրականության, բռնության, հոգեբանական ու սեռական ոտնձգությունների հաճախակի թիրախ են դարձել, և մյուս բանտարկյալները նրանց ստիպել են կատարել արժանապատվությունը նվաստացնող աշխատանք: Քրեակատարողական հիմնարկների ղեկավարությունը վերահաստատում և հանդուրժում էր նման վերաբերմունքը և ԼԳԲՏԻ անձանց պահում առանձնացված խցերում, որտեղ պայմանները զգալիորեն ավելի վատ էին: ՀԴԽ-ը փաստում էր, որ նույնասեռական կամ որպես նույնասեռական ընկալվող տղամարդիկ, կամ նրանց հետ կապ ունեցողները և այն բանտարկյալները, որոնք դատապարտված են այնպիսի հանցանքների համար, ինչպիսիք են՝ բռնաբարությունը, ինչպես նաև նրանք, ովքեր հրաժարվում են ապրել «բանտի չգրված օրենքներով», պահվել են մյուս բանտարկյալներից առանձին և ստիպված են եղել կատարել նվաստացնող աշխատանք, ինչպիսին է սանհանգույցների մաքրումը, մյուսների աղբը հավաքելն ու սեռական ծառայությունների մատուցումը: Ըստ ՀԴԽ-ի հաղորդման մայիսին «Նուբարաշեն» ՔԿՀ-ի անձնակազմը ԼԳԲՏԻ բանտարկյալներից մեկի սեռական ինքնության մասին տեղեկացրել է վերջինիս ծնողներին, որից հետո նա հայտնվել է դեպրեսիվ իրավիճակում և կատարել ինքնավնասում: Չնայած հետզհետե վատթարացող առողջական վիճակին՝ նա շաբաթներ շարունակ չի ստացել բուժօգնություն և տեղափոխվել է դատապարտյալների հիվանդանոց միայն ՀԴԽ-ի միջամտությունից հետո:

Վարչաբարություն. Իշխանությունները նախատեսված կարգով չեն կատարել վստահելի քննություններ, և չեն ձեռնարկել իմաստալի քայլեր՝ լուծումներ տալու բանտարկյալների նկատմամբ վատ վերաբերմունքի, բանտարկյալների միջև վեճերի ու բռնության և համատարած կոռուպցիայի խնդիրներին:

Դատապարտյալներն ու կալանքի տակ գտնվողները միշտ չէ, որ ապահովվում էին տեսակցությունների ողջամիտ հնարավորություններով՝ տեսակցության համար հարմար տարածքների բացակայության հետևանքով: Բանտերի ու կալանավայրերի ղեկավարներն իրենց հայեցողությամբ կամայականորեն կարող էին բանտարկյալներին ու կալանքի տակ գտնվողներին մերժել տեսակցությունները, ընտանիքի հետ կապ հաստատելու ու պարբերականներ ստանալու հնարավորությունները:

Անկախ մոնիտորինգ. Կառավարությունն ընդհանուր առմամբ թույլատրել է տեղական և միջազգային իրավապաշտպան խմբերին, այդ թվում՝ ԽԿԿ-ին, իրականացնել բանտերի և կալանավայրերի պայմանների մոնիտորինգ, և նրանք դա կանոնավոր կերպով իրականացրել են: Իրավասու մարմինները դիտորդներին թույլատրել են առանձնագրույցներ ունենալ բանտարկյալների հետ: Իրավասու մարմինները թույլատրել են Կարմիր խաչի միջազգային կոմիտեին այցելել բանտեր և նախնական կալանքի կենտրոններ: 2017թ. դեկտեմբերին առողջապահության նախարարությունը ձևավորեց քաղաքացիական հասարակության խումբ, որն իրականացնելու էր հոգեբուժական հաստատությունների մոնիտորինգ:

Ներքին անկախ մոնիտորինգի հետ կապված, այնուհանդերձ, կային սահմանափակումներ: Արդարադատության նախարարությունը շարունակում էր մերժել ՀԴԽ դիտորդների մուտքը կալանքի տակ գտնվող որոշ անձանց մոտ, որոնց հետ կապված քննություն իրականացնող մարմինը հաղորդակցության սահմանափակման պահանջ է առաջ քաշել: ՀԴԽ-ը նաև զրկված էր այդ անձանց մեկուսացման պայմաններ ստուգելու հնարավորությունից: ՀԴԽ-ն այս սահմանափակումները համարում էր կամայական և կարծում էր, որ քննություն իրականացնող մարմնի որոշումները չպետք է վերաբերվեն ՀԴԽ-ին: ՀԴԽ-ի համար կային նաև սահմանափակումներ քրեակատարողական հիմնարկներում սննդի որակի ստուգման մասով:

Դրական տեղաշարժեր. Մայիսին խորհրդարանն ընդունեց քրեակատարողական օրենսգրքում, պրոբացիայի մասին օրենքում, քրեական օրենսգրքում և քրեական դատավարության օրենսգրքում առաջարկվող մի շարք փոփոխություններ, որոնցով շտկվում էին վաղաժամկետ ազատ արձակման ծրագրում առկա բացերը: Հունիսի 23-ին գործողության մեջ մտած փոփոխություններով վերացվում էր վաղաժամկետ արձակման դիմումները քննության առնելու համար ձևավորվող անկախ հանձնաժողովը և դրա գործառույթներն անցնում էին քրեակատարողական և պետական պրոբացիոն ծառայություններին: Վաղաժամկետ ազատ արձակման մասին վերջնական որոշումը կայացվում էր դատարանի կողմից՝ այս 2 ծառայությունների զեկույց-առաջարկների հիման վրա: Հոկտեմբերի 16-ին Երևանի առաջին ատյանի դատարանն աննախադեպ վճիռ կայացրեց 1996թ. ցմահ ազատազրկման դատապարտված անձին 10 տարվա պրոբացիայով ազատ արձակելու վերաբերյալ: Հուլիսի 12-ին խորհրդարանն ընդունեց փոփոխություններ քրեակատարողական օրենսգրքում, որով կրկնապատկվեցին առանձնապես ծանր հանցագործության համար որոշակի ժամկետով ազատազրկման կամ ցմահ ազատազրկման դատապարտված անձանց

տրամադրվող կարճատև և երկարատև տեսակցությունները: Փոփոխությունները գործողության մեջ մտան օգոստոսի 4-ից և նախատեսում են տարվա ընթացքում վեց կարճատև և երկու երկարատև տեսակցություն:

Տարվա ընթացքում արդարադատության նախարարության իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոնը միջազգային ֆինանսավորմամբ մշակեց և հաստատեց զայրույթի կառավարման ուսումնական դասընթաց «Աբովյան» ՔԿՀ-ի կին և անչափահաս դատապարտյալների համար: Բացի այդ, «Աբովյան» ՔԿՀ-ի դատապարտյալների համար ապահովվել են անգլերենի, համակարգչային գրագիտության, խոհարարական, թաղիքագործության, ֆիթնեսի, վարսահարդարման, կարիերայի պլանավորման ու գործարար հմտությունների դասընթացներ:

Նոյեմբերի 1-ին որոշում ընդունվեց, որով ամսական 2 հատ 20-րոպեանոց տեսազանգի հնարավորություն տրվեց հեռավորության ու առողջական վիճակի պատճառով ազգականների հետ տեսակցելու հնարավորություն չունեցող դատապարտյալներին:

Դեկտեմբերի 16-ին կառավարությունն արդարադատության նախարարությանն ուղղիչ հաստատությունների վերանորոգման նպատակով հատկացրեց 270 միլիոն ՀՀ դրամ (556.000 ԱՄՆ դոլար):

դ) Կամայական ձերբակալություն կամ կալանավորում

Թեպետ օրենքով արգելվում է կամայական ձերբակալումը և կալանավորումը և սահմանվում ձերբակալության կամ կալանքի օրինականությունը դատարանում վիճարկելու իրավունք յուրաքանչյուրի համար, ոստիկանները հաճախ կամայականորեն բերման են ենթարկել քաղաքացիներին, այդ թվում՝ «թավշյա հեղափոխության» հանգեցրած ապրիլ և մայիս ամիսների առավելագույն խաղաղ ցույցերի մասնակիցներին:

Ոստիկանության և անվտանգության համակարգի դերը

Ազգային ոստիկանությունը պատասխանատու է ներքին անվտանգության համար, մինչդեռ Ազգային անվտանգության ծառայությունը (ԱԱԾ) պատասխանատու է ազգային անվտանգության, հետախուզական գործունեության, սահմանային հսկողության համար: ՀՔԾ-ն առանձին կառույց է, որն իրականացնում է նախաքննություն պետական պաշտոնյաների հնարավոր չարաշահումների հետ կապված քրեական գործերով: Քննչական կոմիտեն պատասխանատու է քրեական գործերով նախաքննությունների և քննչական գործողությունների իրականացման համար: Մինչ Քննչական կոմիտեին գործը հանձնելը ոստիկանության կողմից իրականացվում է հետաքննություն և կալանավորումներ: ԱԱԾ-ի և ոստիկանության ղեկավարներն ուղղակիորեն հաշվետու են երկրի վարչապետին և

նշանակվում են նախագահի կողմից՝ վարչապետի առաջադրմամբ: Կառավարությունը նշանակում է ՀՔԾ-ի և Քննչական կոմիտեի ղեկավարներին՝ վարչապետի առաջադրմամբ:

Քաղաքացիական իշխանությունները պահպանել են արդյունավետ վերահսկողություն ԱԱԾ-ի, ՀՔԾ-ի, ոստիկանության և Քննչական կոմիտեի նկատմամբ, իսկ նոր կառավարությունը միջոցներ է ձեռնարկել չարաշահումները քննելու և պատժելու համար, հատկապես՝ վերին օղակներում:

Ձերբակալության ընթացակարգեր և վերաբերմունքը կալանքի ընթացքում

Չնայած օրենքն իրավապահ պաշտոնյաներից պահանջում է կարգադրագիր ձեռք բերել և ձերբակալություն իրականացնել ողջամիտ կասկած ունենալու դեպքում, իրավասու մարմինները ժամանակ առ ժամանակ կասկածյալներին ձերբակալել են առանց կարգադրագրի և առանց ողջամիտ կասկածի: Օրենքի համաձայն քննություն իրականացնող մարմինն անձին բերման ենթարկելուց հետո երեք ժամվա ընթացքում պարտավոր է կամ ձերբակալել այդ անձին, կամ ազատ արձակել: Անձին արգելանքի վերցնելուց հետո 72 ժամվա ընթացքում քննություն իրականացնող մարմինը պարտավոր է կամ ազատել ձերբակալված անձին, կամ մեղադրանք առաջադրել և կալանքի տակ պահելու կարգադրագիր ստանալ դատավորից: Դատավորները հազվադեպ են մերժել ոստիկանության կալանքի կարգադրագրի հայտերը կամ քննության առել ոստիկանության պահվածքը ձերբակալությունն իրականացնելիս: Ըստ դիտորդների՝ ոստիկանությունը ճշգրիտ գրառումներ չի վարել և բերման ենթարկելու կամ ձերբակալելու մասին արձանագրությունները կամ հետին ամսաթվով է թվագրել, կամ չի լրացրել:

Օրենքը ոստիկանությունից պահանջում է տեղեկացնել արգելանքի վերցված անձանց իրենց բերման ենթարկելու կամ ձերբակալելու պատճառների, ինչպես նաև լրություն պահպանելու, փաստաբան ունենալու, հեռախոսազանգ կատարելու և ձերբակալության պահից սկսած փաստաբանի կողմից ներկայացված լինելու նրանց իրավունքների մասին: Գրավով ազատ արձակելու տարբերակ սահմանված է և մայիսին կատարված իշխանության փոփոխությունից հետո այն կիրառվել է աննախադեպ ծավալներով: Հելսինկյան ասոցիացիան և իրավապաշտպան փաստաբանները մատնանշում էին, որ օրենքը չի սահմանում գրավի առավելագույն չափ և հայտնում էին, որ ազատ արձակելուց հետո գրավը ետ ստանալու ժամանակ մարդիկ բախվում էին բյուրոկրատական քաշքշուկի: Գործնականում դատական համակարգը և իրավապահ կառույցները խափանման միջոցը որոշելիս ապացուցման բեռը դատարանում դրել են կասկածյալների վրա, և նրանք պետք է ի ցույց դնեին, որ փախուստի ռիսկ չկա և իրենք չեն խոչընդոտի քննությանը:

Մեղադրյալները ձերբակալության պահից սկսած ունեն փաստաբան ունենալու իրավունք, իսկ անվճարունակ լինելու դեպքում արգելանքի վերցված անձն օրենքով իրավասու է ունենալ

հանրային պաշտպան: Ըստ իրավապաշտպան դիտորդների կալանավորվածներից քչերն են իմացել փաստաբան ունենալու իրենց իրավունքի մասին: Դիտորդները նշում էին, որ ոստիկանությունը հաճախ խուսափում էր ապահովել պատշաճ իրավական գործընթացի ներքո ընձեռվող իրավունքների ապահովումը՝ պաշտոնապես ձեռքարկելու փոխարեն քաղաքացիներին կանչելով և պահելով որպես գործով անցնող վկաներ և ոչ կասկածյալներ: Այս կերպ ոստիկանությունը կարողացել է այդ անձանց հարցաքննել՝ շրջանցելով փաստաբան ունենալու նրանց իրավունքը:

ԽԿԿ-ն իր 2016թ. հաշվետվության մեջ ներկայացնում էր, որ կիրառվում է մի պրակտիկա, երբ անձը «հրավիրվում է» (սովորաբար հեռախոսազանգով) ոստիկանություն բաժանմունք ոչ ֆորմալ գրույցի: Այդ գրույցները կարող են տևել մի քանի ժամ և անգամ օրեր, քանզի այս մարդկանցից փորձ է արվում կորզել խոստովանություն կամ ստանալ իրեղեն ապացույցներ՝ մինչ նրանց որպես կասկածյալ ներգրավելն ու իրենց իրավունքներին ծանոթացնելուց հետո հարցաքննելը:

Կամայական ձեռքարկություն. Ըստ միջազգային կազմակերպությունների ու իրավապաշտպան դիտորդների՝ ոստիկանությունը, ԱԱԾ անձնակազմը հաճախ արգելանքի տակ է վերցրել կամ ձեռքարկել է մարդկանց՝ առանց կարգադրագրի կամ հավանական պատճառի: Իրավապաշտպան կազմակերպությունները նշում էին, որ ձեռքարկությունները հաճախ եղել են քննություն սկսելու նպատակով, հաճախ այն ակնկալիքով, որ կասկածյալը կխոստովանի և կվերանա հետագա քննության անհրաժեշտությունը:

Ապրիլի 16-ից 23-ը ոստիկանության կողմից «թավշյա հեղափոխության» հետ կապված բերման է ենթարկվել 1.236 հոգի, որից 121-ն անչափահաս: Շատ հաճախ մարդիկ բերման են ենթարկվել այս կամ այն վայրում լինելու համար՝ անկախ ցույցի մասնակցել-չմասնակցելու հանգամանքից: Որոշ դեպքերում չի հարգվել իրավական ներկայացուցիչ ունենալու նրանց իրավունքը և նրանք առանց մեղադրանքի ներկայացման օրենքով նախատեսված մինչև 3 ժամի փոխարեն պահվել են ավելի երկար և նրանց համար չի ապահովվել փաստաբանի հասանելիություն: Մեծ հնչեղություն ստացած մի դեպքում ապրիլի 22-ին ոստիկանությունը ձեռքարկել է խորհրդարանի պատգամավորներ Նիկոլ Փաշինյանին, Արարատ Միրզոյանին և Սասուն Միքայելյանին և նրանց տեղափոխեց անհայտ ուղղությամբ՝ բաց թողնելով ավելի քան 24 ժամ հետո, ապրիլի 23-ին:

Նախնական կալանք. Նախնական կալանքի երկար տևողությունը շարունակել է հանդիսանալ քրոնիկ խնդիր: Ըստ կառավարության՝ հոկտեմբերի 31-ի դրությամբ քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց գրեթե 36 տոկոսը եղել են նախնական կալանքի տակ գտնվողները: Որոշ դիտորդներ համարում են, որ ոստիկանությունը չափից շատ է օգտագործում նախնական կալանքը՝ որպես մեղադրյալներին խոստովանության դրդելու ու ինքնախոստովանական ապացույցներ ձեռք բերելու միջոց:

Թեպետ օրենքը պահանջում է, որ դատախազները ներկայացնեն լավ պատճառաբանված հիմնավորվում կալանքի տակ պահելու ժամկետը երկու ամիսը մեկ երկարաձգելու համար, դատավորները, որպես կանոն, երկարաձգել են կալանքն անհասկանալի հիմքերով: Իրավասու մարմինները հիմնականում հարգել են օրենքի այն դրույթը, որով նախնական կալանքը չպետք է, ընդհանուր առմամբ գերազանցի 6 ամիսը՝ սովորական գործերով և 12 ամիսը՝ ծանր գործերի պարագայում: Գործը դատախազի կողմից դատարան ուղարկելուց հետո օրենքով հետագա կալանքի վերաբերյալ ժամկետային սահմանափակումներ չկան, այլ միայն նշվում է դատաքննության «ողջամիտ տևողության» մասին: Դատախազները դատական լսումների ձգձգման պատասխանատվությունը դնում են դատապաշտպանների և նրանց՝ պաշպանությանը նախապատրաստվելու համար լրացուցիչ ժամանակ տրամադրելու միջնորդությունների վրա: Երկարատև դատաքննությունները նաև պայմանավորված են բոլոր օղակի դատարանների խիստ ծանրաբեռնվածությամբ:

Կալանքի տակ գտնվողի կողմից կալանքի օրինականությունը դատարանում վիճարկելու կարողությունը. Ըստ իրավական փորձագետների կասկածյալները չեն ունեցել գործնական հնարավորություն իրենց ձեռքակալության օրինականությունը բողոքարկելու համար: Այն դեպքերում, երբ մեկ դատարան արդեն վճիռ է կայացրել նախնական կալանքի վերաբերյալ, հավանական չէր, որ մեկ այլ դատարան հարցականի տակ դներ այդ որոշումը:

Համաներում. Նոյեմբերի 1-ին Ազգային ժողովն ընդունեց կառավարության կողմից առաջարկված համընդհանուր համաներումը, որի արդյունքում նոյեմբերի 23-ի դրությամբ բանտերից ազատ էին արձակվել արդեն 523 հոգի:

ե) Արդար հրապարակային դատաքննության իրավունքի մերժում

Չնայած օրենքը նախատեսում է անկախ դատական համակարգ, սակայն ընդհանուր առմամբ անկախություն ու անաչառություն դատական համակարգի կողմից ի ցույց չի դրվում: Մայիսին տեղի ունեցած կառավարության փոփոխություններից հետո շարունակում էր անվստահություն տիրել դատավորների անաչառության հանդեպ և որոշ իրավապաշտպան փաստաբաններ մատնանշում էին, որ չկային դատական անկախության իրավական երաշխիքներ:

Փաստաբանները նշում էին, որ նախկինում վճռաբեկ դատարանը ստորին աստիճանի դատավորներին թելադրել է բոլոր նշանակալի գործերի ելքերը: Փետրվարին՝ ի կատարումն 2015թ. սահմանադրության պահանջների, ձևավորվեց բարձրագույն դատական խորհուրդը (ԲԴԽ). մարտի 5-ին սահմանադրական դատարանի նախկին նախագահ Գագիկ Հարությունյանն ընտրվեց ԲԴԽ-ի նախագահ: Շատ դիտորդներ ԲԴԽ-ին մեղադրում էին լիազորությունները չարաշահելու և դատավորների պաշտոններում միայն նախկին իշխանական կուսակցության հետ կապ ունեցող անձանց նշանակելու մեջ: Փաստաբանները

նան մատնանշում էին, որ ԲԴԽ-ի կողմից նշանակումների, պաշտոնեական առաջխաղացումների և դատավորների տեղափոխությունների նկատմամբ վերահսկողությունը թուլացրել է դատական անկախությունը:

Ըստ դիտորդների վարչական դատարաններն համեմատաբար ավելի շատ ներքին անկախություն ունեին, սակայն կադրային պակաս կար և արդեն իսկ լսումներ էին նախատեսված մինչև 2020թ.:

Իրավասու մարմիններն ընդհանուր առմամբ հետևել են դատական որոշումներին:

ՀԿ-ների հաղորդումների համաձայն դատավորները, որպես կանոն, անտեսել են մեղադրյալների պնդումներն այն մասին, որ ցուցմունքն իրենցից կորզվել է ֆիզիկական բռնության միջոցով: Իրավապաշտպանները շարունակում էին մտահոգություն հայտնել այն փաստի վերաբերյալ, որ դատարանները հիմնվել են այնպիսի ապացույցների վրա, որոնք մեղադրյալների պնդմամբ ձեռք են բերվել ճնշման ներքո, հատկապես այն դեպքերում, երբ այդ ապացույցը դատապարտման հիմք է դարձել:

Իրավապաշտպան ՀԿ-ները ներկայացրել են ցմահ բանտարկության դատապարտվածների նկատմամբ թույլ տրված մարդու իրավունքների չարաշահումները: Ըստ այս ՀԿ-ների՝ նման պատժի դատապարտվածներին հնարավորություն չի տրվել, որպեսզի իրենց գործերը դատական կարգով, ըստ էության, վերանայվեն այն դեպքերում, երբ քրեական օրենսդրության մեջ եղել են փոփոխություններ, որոնք կփոխեին նրանց ցմահ բանտարկությունն ավելի մեղմ պատժով: Ըստ իրավապաշտպան խմբերի՝ ցմահ դատապարտվածների մասով արդարադատության ապահովման հարցում ամենամեծ խոչընդոտներից էր այն, որ դատարանի կարգադրությամբ գործի նյութերն ու իրեղեն ապացույցները ոչնչացվում էին: Սա դատապարտյալներին զրկել է նոր տեխնոլոգիաների կիրառմամբ իրականացվող քրեափորձաքննությունների, օրինակ՝ ԴՆԹ փորձաքննության հիման վրա իրենց գործը վերանայելու հնարավորությունից:

Դատաքննություն

Սահմանադրությամբ և օրենքներով սահմանվում է արդար և հրապարակային դատաքննության իրավունք, սակայն դատական համակարգը չի իրացրել այս իրավունքը:

Օրենքով սահմանվում է անմեղության կանխավարկածը, սակայն կասկածյալների այս իրավունքը սովորաբար չի հարգվել: Դատավարությունների ժամանակ իրավասու մարմիններն ամբաստանյալներին մանրամասնորեն ներկայացրել են նրանց առաջադրված մեղադրանքները, և օրենքը պահանջել է ըստ անհրաժեշտության ապահովել անվճար թարգմանություն ամբաստանյալների համար: Օրենքով պահանջվում է, որ հիմնականում դատական լսումները լինեն դռնբաց, սակայն առանձին դեպքերում, մասնավորապես՝ «հանրության բարքերի», պետական անվտանգության կամ «մասնակիցների անձնական

կյանքի պաշտպանության» շահերից ելնելով լինում են բացառություններ: Ամբաստանյալներն ունեն իրենց ընտրությամբ պաշտպան ունենալու իրավունք, իսկ պետությունը պարտավոր է ամբաստանյալներին հանրային պաշտպան առաջարկել, եթե նրանք դա պահանջում են: Պաշտպանների թվի սղության պատճառով երբեմն այս պարտավորության իրականացումը Երևանից դուրս չի ապահովվել:

Օրենքի համաձայն ամբաստանյալները կարող են պահանջել առերեսում վկաների հետ, ներկայացնել ապացույցներ, ծանոթանալ գործի նյութերին նախքան դատավարությունը, սակայն ամբաստանյալներն ու նրանց փաստաբանները շատ սահմանափակ հնարավորություն են ունեցել առարկություններ ներկայացնելու պետական մեղադրողի կողմից ներգրավված վկաներին կամ ոստիկաններին, մինչդեռ դատարանները կանոնավոր կերպով հակված են եղել ընդունել մեղադրող կողմի նյութերը: Մասնավորապես՝ օրենքն արգելում է ոստիկաններին ի պաշտոնե ցուցմունք տալ, եթե նրանք չեն հանդիսանում գործով վկա կամ տուժող: Դատավորները չէին ցանկանում ընդունել առարկություններ կապված ոստիկանության փորձագետների հետ՝ խոչընդոտելով ամբաստանյալի պատշաճ պաշտպանության հնարավորությանը: Քրեական գործերում դատավորների վերահսկողությունը վկաների ցանկի ու հնարավոր վկաներին հրավիրելու նպատակահարմարության որոշման հարցերում նույնպես խոչընդոտ է եղել պաշտպանության համար: Պաշտպանությունը ներկայացնող փաստաբանները բողոքում էին, որ երբեմն դատավորներն իրենց թույլ չեն տվել խնդրել պաշտպանության վկաների ներկայության ապահովումը: Ըստ փաստաբանների և տեղական ու միջազգային իրավապաշտպան դիտորդների, այդ թվում և Եվրախորհրդի մարդու իրավունքների հանձնակատարի՝ մեղադրող կողմը քրեական արդարադատության համակարգում գերիշխող դիրք է զբաղեցրել:

«Թավշյա հեղափոխությունից» հետո շատ դատավորներ նախնական կալանքից ազատ էին արձակում քաղաքականապես զգայուն գործերով անցնող կասկածյալներին: Ըստ իրավապաշտպան խմբերի՝ քանի որ նրանց գործերում այլ հանգամանքների փոփոխություն չէր եղել, ուստի սա փաստում էր, որ մինչ այրի/մայիս ամիս գրավի փոխարեն նախնական կալանքի կիրառման մասին ընդունված դատական որոշումները քաղաքական շարժառիթներ են ունեցել:

Ամբաստանյալները, դատախազները և տուժողները դատավճռի բողոքարկման իրավունք են ունեցել և հաճախ իրացրել են այդ իրավունքը:

Ըստ բնութագրական մի օրինակի՝ Կարեն Կունգուրցևի հանդեպ տարիներ տևած քրեական հետապնդումը դեռ շարունակվել է մինչդեռ որոշ ՀԿ-ներ հավատացած են, որ նա անմեղ է: Հուլիսի 20-ին վճռաբեկ դատարանը գործը վերադարձրել է առաջին ատյանի դատարան և կարգադրել Կունգուրցևին գրավի դիմաց ազատ արձակել: 2017թ. հուլիսին քրեական վերաքննիչ դատարանը բեկանել էր Դավիթ Հովակիմյանի սպանության փորձի մեջ մեղադրվող ամբաստանյալ Կարեն Կունգուրցևին արդարացնելու մասին 2015թ. ընդունված

վճիռը և դատապարտել նրան 7 տարվա ազատազրկման: Տուժողի ընտանիքը և Մարդու իրավունքների հելսինկյան ասոցիացիան շարունակում էին պաշտպանել Կունգուրցևի անմեղության մասին պնդումները՝ համոզված, որ Դավիթ Հովակիմյանի իրական սպանողը եղել է ԱԱԾ-ի պաշտոնյայի որդի, և վերջինս օգտագործելով իր դիրքը ներազդել է ոստիկանության ու դատախազության վրա և հանցանքը մեղսագրվել է Կունգուրցևին:

Քաղաքական բանտարկյալներ և կալանավորվածներ

«Թավշյա հեղափոխությունից» հետո տեղի իրավապաշտպան ՀԿ-ների կողմից քաղաքական բանտարկյալ համարվող մի շարք անձանց ազատ արձակելուց հետո չեն եղել հաղորդումներ երկրում քաղաքական բանտարկյալների կամ կալանավորվածների մասին:

Քաղաքացիական դատավարություն ու դատական պաշտպանության միջոցներ

Թեպետ քաղաքացիները մարդու իրավունքների ենթադրյալ ոտնահարման դեպքում վնասի փոխհատուցման կամ ոտնահարումը դադարացնելու հայցերով իրավասու են դիմել դատարաններ, դատարանները լայնորեն ընկալվել են որպես կոռումպացված կառույց: Քաղաքացիները նաև հնարավորություն են ունեցել վիճարկել հիմնարար իրավունքներն ու ազատությունները խախտող օրենքների կամ օրենսդրական ակտերի սահմանադրականությունը սահմանադրական դատարանում: Ըստ փաստաբանների՝ ստորին աստիճանի դատարանները չեն հետևում վճռաբեկ դատարանի, ՄԻԵԴ-ի և սահմանադրական դատարանի նախադեպերին: Արդյունքում, առաջին աստիճանի դատարանները շարունակել են գործել միևնույն սխալները:

Տեղում իրավական կարգավորման միջոցները սպառելուց հետո քաղաքացիները պետության կողմից Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով սահմանված իրավունքների հնարավոր խախտումների վերաբերյալ իրենց գանգատները կարող են ներկայացնել ՄԻԵԴ-ին: Պետությունն ընդհանուր առմամբ կատարում է ՄԻԵԴ-ի վճիռները դրամական փոխհատուցումների մասով, սակայն ՄԻԵԴ-ի կողմից որոշումների կայացումից հետո այդ գործերով բովանդակային վերանայում չի կատարվում: Երբ վճիռ է կայացվում այնպիսի գործով, որի հանդեպ կիրառելի է ՄԻԵԴ-ի նախկին որոշումներից մեկը, դատարանները հաճախ չեն հետևում կիրառելի ՄԻԵԴ նախադեպերին:

զ) Կամայական կամ ապօրինի միջամտություն անձնական և ընտանեկան կյանքի, բնակարանի անձեռնմխելիության կամ նամակագրության գաղտնիության նկատմամբ

Սահմանադրությամբ արգելվում են չարտոնված խուզարկությունները և ամրագրվում է քաղաքացիների անձնական կյանքի և հաղորդակցության գաղտնիությունը: Իրավապահ կառույցները միշտ չէ, որ հետևել են այս արգելքներին:

Իրավապահ մարմինները չեն կարող օրինականորեն հեռախոսային խոսակցությունները լսել, նամակագրությանը հետևել կամ խուզարկություն կատարել, եթե դատավորից չեն ստացել նման թույլտվություն, որը պետք է հիմնված լինի հանցավոր գործողությունների մասին համոզիչ ապացույցների վրա: Սահմանադրությամբ սակայն նախատեսվում են բացառություններ, երբ հաղորդակցության գաղտնիությունը կարող է սահմանափակվել առանց դատական կարգադրագրի, երբ անհրաժեշտ է պաշտպանել պետական անվտանգությունը, և պայմանավորված հաղորդակցության մաս կազմողների հատուկ կարգավիճակով: Չնայած իրավապահ մարմիններն ընդհանուր առմամբ հետևել են այս իրավական ընթացակարգին, սակայն փաստաբանները պնդում են, որ դատավորները հաճախ գաղտնալսման, նամակագրությանը հետևելու ու խուզարկության թույլտվությունները տալիս չեն պահանջել ներկայացնել հանցավոր գործունեության հիմնավոր ապացույցներ, ինչը պահանջվում է օրենքով՝ ընդհանուր առմամբ սահմանված իրավական ընթացակարգը դարձնելով սուսկ ձևականություն:

Մինչ մայիսին տեղի ունեցած կառավարության փոփոխությունը կային բազմաթիվ հաղորդումներ, որ իշխանություններն իրականացնում էին հեռախոսագրույցների գաղտնալսում, էլեկտրոնային փոստի և թվային հաղորդակցության այլ միջոցների վերահսկողություն այն անհատների նկատմամբ, ում կառավարությունը ցանկանում էր պահել հսկողության տակ, այդ թվում՝ իրավապաշտպան ակտիվիստների և քաղաքական գործիչների: Ըստ որոշ իրավապաշտպան դիտորդների՝ իշխանություններն ունեցել են ակտիվիստների, քաղաքական գործիչների և այլ անձանց «դոսյեներ», որոնք օգտագործել են անձի հանդեպ ճնշումներ գործադրելու համար: «Թավշյա հեղափոխությունից» հետո շատ ակտիվիստներ ու իրավապաշտպաններ համոզմունք էին հայտնում, որ իրենց այլևս չեն հետևում:

ՄԱՍ 2. ՀԱՐԳԱՆՔ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱԶՍՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՆԴԵՊ

ա) Խոսքի, այդ թվում և մամուլի ազատություն

Երկրի սահմանադրությամբ ու օրենքներով ամրագրված է խոսքի, այդ թվում և մամուլի ազատությունը: Մինչ «թավշյա հեղափոխությունը» կառավարությունը տնտեսական ճնշումների միջոցով ներագդել է լրատվամիջոցների վրա՝ ապահովելու բարեհաճ ու քննադատություն չպարունակող լուսաբանումներ: Հեռարձակող լրատվամիջոցներն ու մեծ շրջանառություն ունեցող շատ տպագիր լրատվամիջոցներ ընդհանուր առմամբ զբաղվել են ինքնագրաքննությամբ՝ արտահայտելով կարծիքներ, որոնք հաճո են եղել իրենց

սեփականատերերի կամ գովազդատուների համար, որոնք պետական պաշտոնյաներ կամ հարուստ գործարարներ են եղել: Փոքր շրջանառություն ունեցող առցանց և տպագիր լրատվամիջոցներն առավել քննադատական են եղել իրենց լուսաբանումներում:

Եղել են լրագրողների նկատմամբ բռնության մի քանի դեպք «թավշյա հեղափոխությանը» նախընթաց ցույցերի լուսաբանման հետ կապված: Մայիսին կառավարության փոփոխությունից հետո լրատվական միջավայրը դարձել է ավելի ազատ, քանի որ որոշ լրատվամիջոցներ դադարեցրել են ինքնագրաքննությունը. Որոշ լրատվամիջոցներ սակայն շարունակում են խուսափել նոր կառավարության քննադատական լուսաբանումից՝ չկամենալով դիտարկվել որպես «հակահեղափոխական»: Շատ ավանդական ու առցանց լրատվամիջոցներ շարունակել են ներկայացնել տվյալ լրատվամիջոցի քաղաքական, տնտեսական և այլ համակրանքներն արտացոլող լուսաբանում՝ առանց օբյեկտիվության ապահովման:

Խոսքի ազատություն. Անհատներն ազատ քննադատել են կառավարությանը մասնավոր գրույցներում ու առցանց հարթակներում՝ առանց վախենալու ձեռքակալումից: Հունիսի 18-ին սակայն վարչապետ Փաշինյանը ֆեյսբուքյան գրառում արեց՝ դատապարտելով որոշ հեռուստակայանների «հակապետական» քարոզությունը: Թեպետ նա չառանձնացրեց որևէ հեռուստակայան, սակայն ըստ լրատվական դաշտը դիտարկող կառույցների այդ հայտարարությունը լրատվական միջավայրի վրա սթափեցնող ազդեցություն ունեցավ (տես՝ Մաս 3):

Մամուլի ու լրատվամիջոցների ազատություն. Հեռարձակող լրատվամիջոցներն ու մեծ շրջանառություն ունեցող տպագիր լրատվամիջոցներն ընդհանուր առմամբ չեն ապահովել քաղաքական բազմակարծություն ու օբյեկտիվ լուսաբանում: Հեռարձակող լրատվամիջոցների և լրագրերի գերակշիռ մասը մասնավոր անձանց կամ խմբերի են պատկանում և հակված են արտացոլել իրենց սեփականատերերի քաղաքական դիրքորոշումները և ֆինանսական շահերը: Հեռարձակող լրատվամիջոցները, հատկապես հանրային հեռուստատեսությունը շարունակում էին մնալ որպես նորությունների ու տեղեկատվության ստացման առաջնային աղբյուրներից մեկը բնակչության մեծ մասի համար: Ըստ լրատվական տիրույթի որոշ դիտորդ կառույցների հանրային հեռուստաընկերությունը շարունակել է լրատվությունը մատուցել իշխանամետ դիրքերից նույնիսկ «թավշյա հեղափոխությունից» հետո՝ պարզապես մի կառավարության դիրքորոշումների փոխարեն ներկայացնելով մյուսինը:

Սոցիալական հարթակների օգտատերերն ազատորեն արտահայտել են իրենց կարծիքը նոր և նախկին կառավարությունների վերաբերյալ տարբեր սոցիալական հարթակներում: Սակայն «թավշյա հեղափոխությունից» հետո կտրուկ ավելացել են սոցիալական ցանցերում կեղծ էջերի օգտագործումն ու մեղիա տիրույթը մանիպուլյացիաների ենթարկելու փորձերը: Ըստ լրատվական տիրույթի դիտորդ կառույցների կառավարությանը թիրախավորելու համար անհատների կողմից օգտագործում էին մանիպուլյացիոն այնպիսի տեխնոլոգիաներ,

ինչպիսիք են՝ հիբրիդ կայքերը, հակասական բլոգերները, տրոլինգը, կեղծ ֆեյսբուքյան խմբերն ու կեղծ գրառումները: Օրինակ՝ սեպտեմբերի 17-ին շրջանառվում էր մի տեսանյութ, որտեղ առողջապահության նախարար Արսեն Թորոսյանն ինքն իրեն անվանում է «գիժ» և «կատարյալ աննորմալ»: «Իրազեկ քաղաքացիների միավորումը» լրատվական դիտորդ կառույցը հրապարակեց մի նյութ, որով փաստում էր, որ տեսանյութը կեղծ էր՝ մատնանշելով այնտեղ առկա մի շարք անհամապատասխանությունները:

Երկրի սակավաթիվ անկախ լրատվամիջոցները, հիմնականում՝ առցանց լրատվամիջոցներ, ինքնաբավ չեն և գոյատևում են միջազգային դրամաշնորհների հաշվին և ունեն խիստ սահմանափակ եկամուտներ գովազդից:

Լրատվականների գովազդի շուկայում «թավշյա հեղափոխությունից» հետո նշանակալի փոփոխություններ չեն եղել և շուկայի հիմնական դերակատարները մնացել են նույնը: Քաղաքական և միջազգային հետազոտությունների հայկական կենտրոնի 2016թ. ներկայացրած զեկույցի համաձայն «Մեդիա Ինթերնեյշնլ Մերվիսիզ» գովազդային միջնորդ հանդիսացող կազմակերպությունը տիրապետում էր երկրի հեռուստատեսության գովազդային համախառն բյուջեների 74 տոկոսին և ուներ երկրի ամենադիտված հինգ հեռուստատեսություններով գովազդի վաճառքի բացառիկ իրավունքներ: Մեկ այլ ընկերություն՝ «Դի Ջի սելյուր», որի վերահսկիչ բաժնեմասը պատկանում է «Մեդիա Ինթերնեյշնլ Մերվիսիզի» բաժնետերերին, վերահսկել է առցանց գովազդային շուկայի ավելի քան մեկ երրորդը՝ գործելով գրեթե նույն կերպ, ինչ «Մեդիա Ինթերնեյշնլ Մերվիսիզը»:

Մեդիառուրտի ընկերությունների սեփականատերերի հարցում հիմնականում բացակայել է թափանցիկությունը:

Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին մարտի 23-ի օրենքով նախատեսվում էր, որ կառավարության նիստերը պետք է լինեն դռնփակ, սակայն Նիկոլ Փաշինյանի կառավարության օրոք այս սահմանափակումը վերացվեց: Նույն կերպ Երևանի քաղաքապետարանը փորձ արեց սահմանափակել լրագրողների ներկայությունն ավագանու նիստերին, սակայն այս մոտեցումը լայն քննադատության արժանացավ և երբևէ չկիրառվեց:

Բռնություն և ոտնձգություններ. Այրիլ ամսվա ընթացքում՝ կառավարության փոփոխությանը նախորդած բողոքի ակցիաների ժամանակ եղել են լրագրողների նկատմամբ բռնության ու մասնագիտական գործունեությանը խոչընդոտելու մի շարք դեպքեր: Ըստ հաղորդումների ապրիլի 13-23 ընկած ժամանակահատվածում ոստիկանության կողմից եղել է 22 լրագրողների և օպերատորների հանդեպ ոտնձգություններ: Ոստիկանները հարձակվել են տեսախցիկներով բողոքի ակցիաները կամ ձերբակալությունները նկարահանող մի քանի լրագրողների վրա: Եղել են նաև դեպքեր, երբ ոստիկանները վնասել են լրագրողների սարքավորումները՝ թույլ չտալու, որ նրանք նկարահանումներ անեն: Լրագրողները նաև վնասվածքներ են ստացել ոստիկանության կողմից հատուկ միջոցների՝ լուսաձայնային նռնակների ու այլ ոչ մահաբեր

միջոցների կիրառման ժամանակ: Լրատվամիջոցների մի շարք ներկայացուցիչներ պնդում էին, որ իրենք հարձակման են ենթարկվել քաղաքացիական հագուստ կրող ոստիկանների կողմից: Այս միջադեպերի հետ կապված ընդհանուր առմամբ հարուցվել է 11 քրեական գործ. 5 գործով մեղադրանք է առաջադրվել, իսկ 3 գործ ի վերջո ուղարկվել է դատարան:

Ապրիլի 14-ին մի խումբ ցուցարարներ ԱԺ պատգամավոր Նիկոլ Փաշինյանի առաջնորդմամբ ներխուժել էին Հանրային ռադիոյի շենք՝ պահանջելով իրենց բողոքի ակցիայի լուսաբանում: Ցուցարարները կոտրել էին ռադիոկայանի դռներից մեկը և գրավել ռադիոյի հիմնական տաղավարները: Զանգվածային անկարգություններ կազմակերպելու մեղադրանքն ավելի ուշ վերացվեց:

Փետրվարին Medialab.am-ի հիմնադիր և խմբագիր Մարիաննա Գրիգորյանն այդ ժամանակվա պաշտպանության նախարար Վիգեն Սարգսյանին ծաղրող շարժ հրապարակելուց հետո ստացել էր մահվան սպառնալիքներ սոցիալական հարթակներում: Սպառնալիքներ ուղարկող օգտատիրոջը ճանաչել էին որպես նախկին զինծառայող: Միջազգային հանրությունն ու լրատվական դաշտի դիտորդ կառույցները մտահոգություններ հնչեցրեցին այս սպառնալիքների վերաբերյալ և պահանջեցին պատասխանատվության ենթարկել մեղավորներին: Փետրվարի 6-ին գլխավոր դատախազությունը քրեական գործ հարուցեց և այն նախաքննության համար փոխանցեց Քննչական կոմիտեին: Տարեվերջին քննությունը դեռ ընթացքի մեջ էր:

Ինտերնետի ազատություն

Անհատները և խմբերն ընդհանուր առմամբ կարողացել են տեսակետներ արտահայտել ինտերնետի միջոցով, ինչպես նաև էլեկտրոնային փոստով: Ապրիլ-մայիս ամիսներին՝ «թավշյա հեղափոխությանը» նախընթաց, երկրով մեկ ընթացքող բողոքի ցույցերի շրջանում ինտերնետ ծառայության ընդհատումներ չեն եղել, և շատ լրատվամիջոցներ ապահովել են դեպքերի ուղիղ տեսալուսաբանում, իսկ ցույցերի առաջնորդներն ու մասնակիցներն օգտվել են ինտերնետից, սոցիալական հարթակներից և ուղիղ հեռարձակումներով անմիջական կապի մեջ են եղել երկրի բնակչության հետ:

Ապրիլի 11-ին 24 ժամով արգելափակվել են Factor.am-ի և Armlur.am-ի յուրօրյան ալիքները: Տարբեր լրատվամիջոցների կողմից եղել են հաղորդումներ տարվա ընթացքում անհայտ աղբյուրների կողմից կատարված կիրբերհարձակումների մասին:

Ըստ Միջազգային հեռահաղորդակցության միության տվյալների 2017թ. Հայաստանում ինտերնետից օգտվել է բնակչության 70 տոկոսը:

Ուսումնակրթական ազատություն ու մշակութային միջոցառումներ

Ուսումնակրթական ազատության ու մշակութային միջոցառումների մասով կառավարության կողմից չեն եղել սահմանափակումներ: Գարնանը տեղ գտած քաղաքացիական ընդվզման համատեքստում երկրում փոխվեց ուսումնակրթական ազատության մասին ընկալումը: Ուսանողները միավորվում էին՝ պայքարելու բուհերում տիրող կոռուպացված իրավիճակի դեմ: Փետրվարին ձևավորվեց Երևանի պետական համալսարանի (ԵՊՀ) ուսանող ակտիվիստների «Ռեստարտ» խումբը, որը նպատակ ուներ հնչեցնել իրենց մտահոգություններն ու ուշադրություն հրավիրել բուհերում տիրող կոռուպցիային: Ապրիլին ԵՊՀ «Ռեստարտի» ակտիվիստները միացան բողոքի ցույցերին ընդդեմ այն ժամանակվա նախագահ Սարգսյանի, որ պատրաստվում էր ստանձնել վարչապետի պաշտոնը և կոչ արեցին ողջ երկրի ուսանողներին դասադուլ հայտարարել և միանալ արշավին: Բողոքի ակտիվ մեծացման հետ որոշ բուհերում ու հանրակրթական դպրոցներում ղեկավարությունը կողպում էր հաստատությունների դռները, որպեսզի սովորողները, ուսուցիչները և դասախոսները չմիանան ցուցարարներին: Ոստիկանությունը փակված փողոցները բացելու և նստացույցերը ցրելու նպատակով ուսանողների դեմ ուժ կիրառեց: Բազմաթիվ ուսանողներ ձերբակալվեցին ու բերման ենթարկվեցին ոստիկանական բաժիններ, բայց սովորաբար նրանք հենց նույն օրն ազատ էին արձակվում: Բողոքի ակցիաների ժամանակ բուհերի ղեկավարության կողմից դասերը բաց թողնելու, այսինքն՝ բողոքի ակցիաներին մասնակցելու համար ուսանողների կամ դասախոսների հեռացնելու դեպքեր չեն գրանցվել: Մայիսին կառավարության փոփոխությունից հետո ԵՊՀ-ի «Ռեստարտ» խումբը բողոքի ակցիաներ էր կազմակերպել ռեկտորի դեմ, որի հետ կապված չկային հաշվեհարդարի սպառնալիքներ:

«Թավշյա հեղափոխությունը» հանգեցրեց նրան, որ առաջ քաշվեցին բուհերի ղեկավարների հրաժարականի պահանջներ: Օրինակ՝ Շիրակի պետական համալսարանի ռեկտորը, ում ցուցարարները մեղադրում էին կոռուպցիայի և իրեն քննադատող դասախոսներին աշխատանքից հեռացնելու մեջ, ստիպված էր հրաժարական տալ:

բ) Խաղաղ հավաքներ կազմակերպելու ու միավորումներ կազմելու ազատություն

Սահմանադրությամբ ու օրենքներով ամրագրված է խաղաղ հավաքների և միավորումներ կազմելու ազատության իրավունքը: Որոշ դեպքերում, կառավարությունը սահմանափակել է այս ազատությունները:

Խաղաղ հավաքների ազատություն

Սահմանադրությամբ ու օրենքներով ամրագրված է խաղաղ հավաքների և միավորումներ կազմելու ազատության իրավունքը և զարնան «թավշյա հեղափոխությունից» հետո նոր կառավարությունն ընդհանուր առմամբ հարգել է այս իրավունքները:

Տեղի ՀԿ-ներից «Հայկական հելսինկյան կոմիտեն» ուսումնասիրել է խաղաղ հավաքների ազատության իրավունքը՝ հիմնականում ուշադրությունը բևեռելով ապրիլ-մայիս ամիսների ցույցերի շրջանին: Ապրիլին տեղի ունեցած հանրահավաքները նախորդ տարիներին տեղի ունեցած հանրահավաքների համեմատ աննախադեպ էին իրենց բազմամարդությամբ և որոշ պահերի մասնակիցների թիվն հասել է 100.000-150.000 հոգու: Ապրիլի 13-ից 15-ը ՀԿ-ների հաղորդումների համաձայն ուստիկանությունը չէր միջամտում հանրահավաքներին և երթերին, սակայն իրավիճակը փոխվեց ապրիլի 16-ից, երբ Նիկոլ Փաշինյանը «ապակենտրոնացված պայքարի» կոչ արեց և մարդիկ սկսեցին երթեր ու հանրահավաքներ անցկացնել Երևանի տարբեր մասերում, ինչպես նաև մարզերում:

«Հայկական հելսինկյան կոմիտեի» գնահատմամբ հավաքների ժամանակ ուստիկանության կողմից անհամաչափ ուժի և բռնության ու պաշտոնեական լիազորություններն անցնելու բազմաթիվ դեպքեր են տեղ գտել ապրիլի 16-ից 23-ն ընկած ժամանակահատվածում: Օրինակ՝ ապրիլի 16-ին և 22-ին ուստիկանության անհայտ ստորաբաժանման կողմից առանց պատշաճ նախազգուշացման 11 հատ լուսաձայնային նոնակ արձակվեց հավաքվածների վրա, ինչի հետևանքով բժշկական օգնության դիմեցին 40 քաղաքացի և 6 ուստիկան: Վնասվածքներ ստացան նաև 168.am և Factor.am լրատվական կայքերի լրագրողները:

Ըստ ուստիկանության հաղորդագրության ապրիլի 16-ից 26-ը հարկադրաբար ուստիկանական բաժիններ բերման են ենթարկվել 1.283 հոգի, որոնցից՝ 1.144-ը Երևանում: Ընդ որում, այս մարդկանցից 918-ի նկատմամբ կիրառվել է վարչական կալանք: Ցուցարարների գերակշիռ մասն օրենքով սահմանված կարգի համաձայն վարչական կալանքի տակ 3 ժամից ավել չի մնացել, սակայն որոշ ցուցարարներ պնդում էին, որ իրենց ավելի երկար են պահել: Ուստիկանության բաժին բերման ենթարկված որոշ անձանց թույլ չի տրվել հեռախոսազանգ կատարել: Փաստաբանները, որոնք համագործակցում էին իրավապաշտպանների ձևավորած թեժ գծի շրջանակում, հայտնում էին, որ շատ դեպքերում ուստիկանները թույլ չեն տվել տեսնել իրենց պաշտպանյալներին: Որոշ դեպքերում ուստիկանական բաժիններ փաստաբանների մուտքի խոչընդոտները վերացվել են ՄԻՊ գրասենյակի միջամտությունից հետո:

Եղել են բռնությամբ ուղեկցված միջադեպեր դիմակավորված անձանց մասնակցությամբ: Օրինակ՝ ապրիլի 22-ին Էրեբունու փողոցում մոտ 50 հոգի մահակներով, էլեկտրաշոկերով ու քարերով և հայեռանքներ տեղալով հարձակում են գործել ցուցարարների վրա: Հարձակվողների մեծ մասի դեմքերը փակված էին դիմակներով: Ավելի քան 20 ուստիկան ներկա են եղել միջադեպին, սակայն նրանք որևէ կերպ չեն միջամտել, որպեսզի դադարեցնեն

ծեծկոտուրք: Միջադեպի ժամանակ վնասվածքներ են ստացել «Շանթ» ՀԸ-ի մեկ լրագրող և մեկ օպերատոր և Factor TV-ի օպերատոր:

Ապրիլի 13-ից մայիսի 8-ը տեղի ունեցած հավաքների ժամանակ ոստիկանության կողմից լիազորությունների չարաշահման և բռնության դեպքերով ՀՔՕ-ում ավելի քան 50 քրեական գործ է հարուցվել: Ավելի ուշ, այս գործերը միավորվել են մեկ գործում և ստեղծվել է քննչական խումբ: Այդ քրեական գործի շրջանակում քննվում է բռնության ավելի քան 60 դրվագ, որոնցով տուժող ճանաչվածների շարքում են լրագրողներ, փաստաբաններ և բազմաթիվ քաղաքացիներ:

Նոյեմբերին խաղաղ հավաքների և միավորումների ազատության իրավունքների հարցերով ՄԱԿ-ի հատուկ զեկուցողը նշեց. «Հայաստանը զգալի ճանապարհ է անցել վերջին շրջանի բարեփոխումներով և նոր օրենքների ընդունմամբ, որոնք կարգավորում են խաղաղ հավաքների, միություններ կազմելու ազատության իրավունքների իրացումը. այնուհանդերձ, անհրաժեշտ է, որ իշխանություններն ապահովեն գործող կանոնակարգերի հետևողական կիրարկումը»:

Միավորումների ազատություն

Այս իրավունքն ամրագրված է սահմանադրությամբ և օրենքներով և կառավարությունն ընդհանուր առմամբ հարգել է այն: Հասարակական կազմակերպությունների մասին օրենքով, որը գործողության մեջ է մտել 2017թ. փետրվարից, շրջակա միջավայրի պահպանության խնդիրների շուրջ ՀԿ-ներն իրավասու են դատարանում իրենց շահառուների օրինական շահը ներկայացնել: Այս սահմանափակումը հակասում է 2010 թ.-ի Սահմանադրական դատարանի որոշմանը, որը թույլ է տալիս բոլոր հասարակական կազմակերպություններին դատարանում հանդես գալ որպես կողմ:

Հոկտեմբերի 29-ին արդարադատության նախարարությունը ներկայացրեց Հասարակական կազմակերպությունների մասին օրենքում փոփոխություններ կատարելու մասին նախագիծ, որը ծավալուն հանրային բանավեճի հանգեցրեց: Օրինակ՝ նոյեմբերի 16-ին Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնը հայտարարություն տարածեց, որտեղ մտահոգություն էր հնչեցնում օրենքի փոփոխմամբ հասարակական կազմակերպությունների հաշվետվական պահանջների մասով խնդրահարույց փոփոխություններ կատարելու վերաբերյալ: Նախագծով առաջարկվում էր խստացնել քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հաշվետվական պահանջները՝ այդ պահանջները տարածելով բոլոր կազմակերպությունների վրա՝ անկախ նրանց ֆինանսավորման աղբյուրներից: Բացի այդ, նախագծով նաև պահանջվում էր դոնորների, ինչպես նաև ֆինանսավորում ստացած կառույցի կառավարման մարմինների անդամների, աշխատակազմի և կամավորների մասին անձնական տվյալներ: Ըստ

Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի այս նախագծով ոչ ողջամիտ և անհամաչափ բեռ էր դրվում հասարակական կազմակերպությունների վրա:

զ) Կրոնի ազատություն

Տես՝ Պետքարտուղարության Կրոնական ազատությունների մասին միջազգային զեկույցը www.state.gov/religiousfreedomreport/ էջում:

դ) Տեղաշարժվելու ազատություն

Օրենքը սահմանում է ներքին տեղաշարժի, արտասահմանյան ուղևորությունների, արտագաղթի և հայրենադարձության ազատությունը, և կառավարությունն ընդհանուր առմամբ հարգել է այս իրավունքները:

Ներքին տեղահանված անձանց (ՆՏԱ), փախստականներին, վերադարձող փախստականներին ու ապաստան հայցողներին, քաղաքացիություն չունեցող անձանց ու այլոց պաշտպանելու ու աջակցելու նպատակով իրավասու մարմինները համագործակցել են ՄԱԿ-ի փախստականների հարցերով գլխավոր հանձնակատարի գրասենյակի և մարդասիրական այլ կազմակերպությունների հետ:

Չարաշահումներ կապված միգրանտների, փախստականների ու քաղաքացիություն չունեցող անձանց հետ. Թեպետ միգրանտների, փախստականների կամ քաղաքացիություն չունեցող անձանց հանդեպ համակարգային խտրականության մասին հաղորդումներ չեն եղել, սակայն եղել են ծագման երկրի, ռասայական կամ կրոնական հիմքով պայմանավորված խտրական դրսևորման մասին հաղորդումներ կապված ապաստան հայցողների դիմումների ընդունման ու կալանավորման հարցերի հետ, ինչպես նաև եղել են դժվարություններ կապված ինտեգրման հետ:

Տարվա ընթացքում երկրի սահմանը ցամաքով կամ օդով հատելուց կամ Երևանի միջազգային օդանավակայան ժամանելուց հետո անօրինական մուտքի համար ձերբակալվել է 28 օտարերկրացի, մինչդեռ 2017թ. նրանց թիվը կազմում էր 4 հոգի: Ի տարբերություն նախկինում կիրառվող գործելաոճի, երբ իրավասու մարմիններն ապաստան հայցելու մասին դիմումներն ընդունելուց հետո ապօրինի սահմանը հատելու համար կալանավորել ու դատապարտել են ապաստան հայցողներին, գրանցվել է նրանց կալանքից ազատելու մի քանի դեպք: Չնայած օրենքի համաձայն ապաստան հայցողների համար չի նախատեսվում քրեական պատասխանատվություն ապօրինի սահմանահատման համար, իրավասու մարմինները պահանջել են, որ նրանք մնան կալանքի տակ մինչև իրենց դիմումի բավարարումը կամ կրեն պատժի մնացյալ մասը: Աֆղանստանցի երկու ապաստան հայցողներ, որոնց սահմանն անօրինականորեն հատելու համար 2015թ. կալանքի տակ էին վերցվել և դատապարտվել 3 տարվա ազատազրկման, սեպտեմբերի կեսերին վաղաժամկետ ազատ են արձակվել և

տեղավորվել ապաստան հայցողների ընդունման կենտրոնում: Մինչ պատժի ժամկետը լրանալը՝ սեպտեմբերի կեսից մինչև հոկտեմբերի 6-ը նրանց նկատմամբ սահմանված էր հսկողություն և կար պարտադիր ներկայանալու պահանջ:

Արտասահմանյան ուղևորություններ. Ժամանակավոր կամ մշտապես երկրից հեռանալու համար քաղաքացիները պետք է ելքի վիզա ձեռք բերեն: Ժամանակավոր երկրից բացակայելու համար անհրաժեշտ ելքի վիզա կարելի է մեկ օրվա ընթացքում հեշտությամբ ձեռք բերել՝ վճարելով 1000 դրամ (2 ԱՄՆ դոլար) վավերականության յուրաքանչյուր տարվա համար:

Ներքին տեղահանված անձինք (ՆՏԱ)

2016թ. մայիսի դրությամբ ըստ Ներքին տեղահանության մոնիտորինգի կենտրոնի 1988-94 թթ. շուրջ 65.000 տարհանված տնային տնտեսություններից դեռևս մոտ 8.400 ՆՏԱ եղել է տեղահան վիճակում: Երկրի որոշ ՆՏԱ-ների ու նախկին փախստականների համար ապահովված չէին համարժեք բնակարանային պայմաններ ու սահմանափակ էին տնտեսական հնարավորությունները:

Փախստականների պաշտպանություն

Ապաստանի հասանելիություն. Օրենքի համաձայն նախատեսվում է անձանց փախստականի կամ ապաստան հայցողի կարգավիճակի տրամադրում, և կառավարությունը ստեղծել է փախստականներին պաշտպանություն տրամադրելու համակարգ: Օրենքը հաշվի է առնում երեխաների, մտավոր հաշմանդամություն ունեցողների և տրավմա վերապրածների առանձնահատուկ կարիքները և կալանավայրերին թույլ է տալիս ընդունել ապաստանի դիմումներ: Ծագումով ոչ-հայ փախստականները քաղաքացիություն կարող էին ստանալ երկրում երեք տարվա մշտական օրինական կացությունից հետո:

Թեպետ փախստականի կարգավիճակի սահմանման հետ կապված ընթացակարգերի ու որոշումների կայացման գործընթացի ընդհանուր որակը վերջին տասնամյակի ընթացքում բարելավվել է, սակայն մտահոգություններ են մնում կրոնական և սեռական որոշակի նկարագիր ունեցող անձանց ապաստան հայցելու գործերի որոշումների առնչությամբ: Ապաստանի հետ կապված ընթացակարգերն ու փախստականներին վերաբերող քաղաքականության իրականացման հետ կապված բոլոր հարցերը ողողված են եղել անվտանգության նկատառումներով և ԱԱԾ-ը շարունակել է ներագդել Միգրացիայի պետական ծառայության կողմից ապաստանի մասին որոշումների ընդունմանը:

Ապաստանի հետ կապված ընթացակարգերի թերություններից էին թարգմանիչների համար պետական ֆինանսավորման սուղ լինելը և համապատասխանելիությունը դիտարկող պաշտոնյաների իրավասության շրջանակի հետ կապված բացերը: Դատական համակարգի կարողությունների մեծացմամբ ավելացել են Միգրացիայի պետական ծառայության

ապաստանի վերաբերյալ որոշումները չեղյալ համարելու դեպքերը: 2009թ. ի վեր առաջին անգամ Վարչական դատարանը բեկանել է Իրաքից ժամանած մի ընտանիքի փախստականի կարգավիճակ տրամադրելու դիմումը մերժելու վերաբերյալ Միգրացիայի պետական ծառայության որոշումը և վերջինիս պարտավորեցրել դիմողներին ճանաչել փախստական: Ընդհանուր առմամբ, դատարանները ավելի շատ ուշադրություն են դարձրել ապաստանի դիմումների փաստական տվյալներին և առավել համակարգված կերպով են կիրառել ծագման երկրի մասին տեղեկությունները:

Իրավասու մարմինները երկրում գտնվող ազգությամբ հայ սիրիացիներին շարունակել են առաջարկել պաշտպանության զանազան տարբերակներ, մասնավորապես՝ արագացված ընթացակարգով քաղաքացիություն, կացության թույլտվություն կամ փախստականի կարգավիճակ: Արագացված կարգով քաղաքացիության տրամադրմամբ Սիրիայից տեղահանված անձինք ձեռք բերեցին առողջապահական ու հիմնական սոցիալական ծառայությունների մասով նույն իրավունքները, ինչ երկրի քաղաքացիները:

Հիմնական ծառայությունների հասանելիություն. Ապաստան հայցողների ընդունման միակ կենտրոնում, ըստ մի միջազգային ՀԿ-ի, պայմանները չէին համապատասխանում ստանդարտներին և դրանք հարմարեցված չէին հատուկ կարիքներ և հաշմանդամություն ունեցող անձանց համար: Տարվա ընթացքում ապաստան հայցողների թվի ավելացմամբ, որոնցից շատերն Իրանից էին և Աֆղանստանից, ընդունման կենտրոնի կարողությունները սպառվել էին և չկար այլընտրանքային լուծում հատուկ կարիքներով անձանց ու մեծ ընտանիքներին տեղավորելու համար: Բացի այդ, ըստ պնդումների կենտրոնը չէր ապահովում մաքուր գիշերակացի հնարավորություն, համարժեք սանիտարահիգիենիկ պայմաններ, բավարար սնունդ և դեղորայք, որի հետևանքով այնտեղ մեծ էր հիվանդացությունը և տարածված էին վարակիչ հիվանդություններ: Շատ փախստականներ նաև չունեին աշխատելու կամ կրթություն ստանալու հնարավորություն, քանի դեռ իրենց գործն իրավական վարույթում էր գտնվում:

Փախստականներին տրամադրված կացարանները սովորաբար եղել են ոչ բավարար քանակի և ունեցել են վատ պայմաններ, և այդ հարցը, ինչպես նաև զբաղվածությունը, շարունակում էին մնալ նրանց ամենամեծ խնդիրը: Տեղահանված շատ ընտանիքներ օգտվում էին վարձավճարի սուբսիդավորման ծրագրից, որին աջակցում էին ՄԱԿ-ի փախստականների հարցերով գլխավոր հանձնակատարի գրասենյակը և սիյուռքի կազմակերպությունները: Իշխանությունների կողմից գործարկվել էր փախստականների ինտեգրման տուն նախատեսված 29 հոգու համար և փախստականի կարգավիճակի շնորհումից հետո առաջին մի քանի ամիսների համար այստեղ առաջարկում էին անվճար օթևան: Սիրիահայերը խոսում են մեկ այլ բարբառով և լեզվական տարբերությունները ստեղծում էին խոչընդոտներ աշխատանքի հարցում, և սկզբնական շրջանում՝ կրթության հարցում:

Հիմնարար լուծումներ. 2016թ. կառավարությունն ընդունեց մի նոր հայեցակարգային փաստաթուղթ, որտեղ նկարագրվում էին ապաստան ու փախստականի կարգավիճակ ստացած անձանց, ինչպես նաև երկարաժամկետ միգրանտների ինտեգրման ուղղությամբ սահմանվող նպատակները: Ըստ ՄԱԿ-ի փախստականների հարցերով գլխավոր հանձնակատարի գրասենյակի փախստականների պաշտպանության իրավական դաշտի ընդլայնումը սկզբունքորեն ողջունելի էր, սակայն հայեցակարգը չէր անդրադառնում Հայաստանի քաղաքացիություն ստացած սիրիացիներին, այդ կերպ ծառայությունների մատուցման դաշտից դուրս թողնելով տեղահանված սիրիացիների մեծ մասին, որոնք հակամարտության սկզբից ի վեր ժամանել էին Հայաստան: Հայեցակարգը նաև չէր անդրադառնում ինտեգրման այնպիսի կարևոր բաղադրիչների, ինչպիսիք են լեզվական կարիքները և կրթության հասանելիությունը: Միյուրքի նախարարությունը մշակեց ինտեգրման ռազմավարություն՝ ուշադրության կենտրոնում պահելով սիրիական կոնֆլիկտի հետևանքով տեղահանված սիրիահայերի հարցը: ՄԱԿ-ի փախստականների հարցերով գլխավոր հանձնակատարի գրասենյակը պաշտպանում էր այն մոտեցումը, որ լինի միասնական կարգ և ինտեգրման համակողմանի ռազմավարություն, որը կվերաբերի բոլոր փախստականներին և այլ տեղահանված անձանց ինտեգրմանը՝ առանց որևէ խտրականության: Թեպետ կառավարության կողմից նախնական հավանություն էր տրվել տեղում ինտեգրման մասին նախնական հայեցակարգին, սակայն դրա լիարժեք իրականացումը դեռ չէր մեկնարկել: ՀԿ-ները մասամբ լրացնում էին այս բացը՝ ՄԱԿ-ի փախստականների հարցերով գլխավոր հանձնակատարի գրասենյակի և միջազգային դոնորների ֆինանսավորմամբ:

Քաղաքացիություն չունեցող անձինք

Ըստ ոստիկանության տվյալների քաղաքացիություն չունեցող անձանց թիվը հոկտեմբերի 29-ի դրությամբ կազմում էր 801 հոգի: Այս թվի ավելացումը պայմանավորված է այլ երկրների, հատկապես՝ Ռուսաստանի Դաշնության քաղաքացիություն ձեռք բերելու նպատակով Հայաստանի քաղաքացիությունից հրաժարվող անձանց թվի ավելացմամբ: Բացի այդ, իրավասու մարմինները 2017թ. դեկտեմբերի դրությամբ որպես քաղաքացիություն չունեցող անձ էին որակվում նաև Ադրբեջանից եկած շուրջ 1.400 փախստականները:

Օրենքը նախատեսում է քաղաքացիության շնորհում հանրապետության տարածքում ծնված քաղաքացիություն չունեցող երեխաներին:

ՄԱՍ 3. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ

Սահմանադրությամբ և օրենքներով քաղաքացիներին տրված է գաղտնի քվեարկության միջոցով իրացվող համընդհանուր ու հավասար ընտրական իրավունքի հիման վրա ազատ ու արդարացի պարբերական ընտրությունների միջոցով իշխանությունը փոխելու հնարավորություն:

2017թ. ապրիլին երկրում անցկացվեցին խորհրդարանական ընտրություններ, որով նոր սահմանադրության ներքո ընտրվեց առաջին օրենսդիրը: Սրանով և ընտրական օրենսգրքում կատարված փոփոխություններով երկրի կիսանախագահական կառավարման համակարգը փոխվեց կառավարման խորհրդարանական համակարգով՝ վերացնելով երկրի նախագահի ու երկու խոշոր քաղաքների քաղաքապետերի ուղղակի ընտրությունը և ներդնելով բարդ համամասնական ընտրակարգ, որը շատերը բնութագրում էին որպես կիսամեծամասնական ընտրակարգ: Ապրիլի 9-ին լրացավ Սերժ Սարգսյանը նախագահական պաշտոնավարման երկրորդ շրջանը, իսկ ապրիլի 17-ին նա խորհրդարանի կողմից ընտրվեց վարչապետ՝ ըստ նոր սահմանադրության: Սակայն ապրիլի 23-ին Սերժ Սարգսյանը համապետական բողոքի ցույցերի արդյունքում հրաժարական տվեց: Մայիսի 8-ին հասարակական ճնշման ներքո խորհրդարանը վարչապետ ընտրեց ընդդիմության առաջնորդ և պատգամավոր Նիկոլ Փաշինյանին:

Ընտրություններ և քաղաքական մասնակցություն

Կայացած վերջին ընտրությունները. Դեկտեմբերի 9-ին տեղի ունեցան արտահերթ խորհրդարանական ընտրություններ, ինչին նախորդեց կարճ ու եռուն, սակայն ազատ ու մրցակցային ընտրարշավ, որտեղ ընտրապայքարի դուրս եկած բոլոր կողմերն ընդհանուր առմամբ ունեին հավասար հնարավորություններ: Նիկոլ Փաշինյանի գլխավորած «Իմ քայլը» դաշինքը ստացավ քվեների 70.44 տոկոսը և խորհրդարանական տեղերի գերակշիռ մասը: Խորհրդարան անցան նաև «Բարգավաճ Հայաստան» և «Լուսավոր Հայաստան» կուսակցությունները՝ համապատասխանաբար ստանալով քվեների 8.27 և 6.37 տոկոսը: ԵԱՀԿ-ի Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակը (ԺՀՄԻԳ) դեկտեմբերի 10-ի նախնական զեկույցում նշեց, որ «արտահերթ խորհրդարանական ընտրություններն անցկացվել են հիմնարար ազատությունների պահպանմամբ և վայելել են հանրության լայն շրջանակների վստահությունը, ինչը պետք է պահպանվի ընտրական հետագա բարեփոխումների ժամանակ... Կանխամտածված ընտրախախտումների, այդ թվում՝ ընտրակաշառքի և ընտրողների վրա ճնշումների ընդհանուր բացակայությունն իրական մրցակցության հնարավորություն է ընձեռել»: Զեկույցում սակայն նշվում էր, որ թեպետ ընտրապայքարի մասնակիցների կողմից չեն եղել հաղորդումներ ընտրակաշառքի և

ընտրական այլ խախտումների համակարգային փորձերի մասին, սակայն ումանք պնդում էին, որ հիմնական մրցակցող կողմերից մեկը կարճաժամկետ պայմանագրեր է կնքել քարոզարշավի իրականացման աշխատանքներում ընդգրկված անձանց և քաղաքացիական դիտորդների հետ՝ ենթադրաբար վերջիններիս ձայները գնելու նպատակով:

ԺՀՄԻԳ դիտորդները նշել էին, որ «մրցակիցները կարողացել են ազատորեն իրականացնել իրենց քարոզարշավները. քարոզարշավի ընթացքում լիովին պահպանվել են միավորումներ կազմելու, խաղաղ հավաքների, արտահայտվելու և տեղաշարժի հիմնարար ազատությունները»: Միննույն ժամանակ նրանք ընդգծում էին, որ քարոզարշավի ընթացքում նկատելի է եղել ապատեղեկատվության տարածումը, ինչպես նաև սադրիչ մտքերի փոխանակումը մրցակցող կողմերի միջև սոցիալական հարթակներում: Ընտրական գործընթացի վրա ստվեր նետած սակավաթիվ խնդիրներից դիտորդները նշում են, որ «քարոզարշավի ֆինանսավորման ամբողջականությունը խաթարվել է կարգավորման, հաշվետվողականության և թափանցիկության պակասի պատճառով: Չնայած ԺՀՄԻԳ-ի և Վենետիկի հանձնաժողովի նախկին հանձնարարականներին՝ կազմակերպչական այլիսի ծախսերը, ինչպիսիք են գրասենյակային տարածքի, հաղորդակցության, փոխադրամիջոցների և անձնակազմի հետ կապված ծախսերը չեն համարվում ընտրական ծախսեր, և, հետևաբար կարող են չգեկուցվել՝ խաթարելով քարոզարշավի ֆինանսավորման թափանցիկությունը»: ԵԱՀԿ դիտորդների կողմից մատնանշված այլ թերություններն առնչվում էին ընտրաբողոքների ներկայացման նեղ իրավական շրջանակին, չնայած որ նախկինում դրա վերաբերյալ եղել էին հանձնարարականներ ԺՀՄԻԳ-ի և Վենետիկի հանձնաժողովի կողմից:

Քաղաքական կուսակցություններ և քաղաքական մասնակցություն. Օրենքը չի սահմանափակում կուսակցությունների գրանցումը կամ գործունեությունը, սակայն մինչ «թավշյա հեղափոխությունը» իշխանությունները քաղաքական բազմակարծությունը ճնշել են այլ ուղիներով:

Չնայած մայիսին տեղի ունեցած կառավարության փոփոխությունից հետո քաղաքական բազմակարծությունը մեծացել է, սակայն դիտորդները նկատում էին, որ հասարակությունում արմատականության խորացում է նկատվում, որն առավելապես տեսանելի է սոցիալական հարթակներում, որն էլ նոր կառավարության հանդեպ քննադատության տիրույթն է նեղացրել, քանի որ ցանկացած անհամաձայնություն «Քաղաքացիական պայմանագրի» աջակիցների կողմից որակվել է որպես «հակահեղափոխականություն»: Որոշ ընդդիմադիր քաղաքական գործիչներ պնդում էին, որ հասարակական ճնշումներն իրենց հանդեպ ուղղորդվում էին նոր կառավարության կողմից:

Կանանց և փոքրամասնությունների մասնակցությունը. Որևէ օրենք չի սահմանափակում կանանց կամ փոքրամասնությունների ներկայացուցիչների մասնակցությունը քաղաքական գործընթացներին, սակայն հասարակության նահապետական բնույթը խոչընդոտել է կանանց լայնամասշտաբ մասնակցությանը երկրի քաղաքական կյանքում, ինչպես նաև հանրային

հատվածի որոշումներ կայացնող պաշտոններում: Թեպետ խորհրդարանում և Երևանի ավագանում կին պատգամավորների թիվը 2017թ. համեմատ ավելացել է, սակայն ցածր է մնում կանանց մասնակցության ցուցանիշն այս և այլ որոշում կայացնող օղակներում: Երկրի 10 մարզերից ոչ մեկի մարզպետը կին չէր:

Դեկտեմբերի 9-ի ընտրություններից հետո ԵԱՀԿ դիտորդների նախնական զեկույցում նշվում էր, որ թեկնածուների ցուցակները բավարարել են օրենքով սահմանված գենդերային ներկայացվածության 25 տոկոսի շեմը և առաջադրված 1.444 ընդհանուր թեկնածուների 32 տոկոսը կանայք էին: ԵԱՀԿ-ը նշում էր, որ այս քվոտան, այնուամենայնիվ, չի երաշխավորում խորհրդարանում կանանց նույն ներկայացվածությունը, քանի որ մանդատների կեսը բաշխված է ըստ վարկանիշային ձայների: Քարոզչության միջոցառումներին կուսակցությունները հազվադեպ էին ներկայանում կին-թեկնածուներով: Կանայք միայն երբեմն էին ինքնուրույն քարոզչություն իրականացնում, իսկ հանրահավաքների ժամանակ հազվադեպ էին հանդես գալիս որպես բանախոս: Որոշ կին թեկնածուներ իրենց սեռի պատճառով դարձել էին վիրավորական հռետորաբանության թիրախ:

Խորհրդարանում մեկական տեղ է նախատեսվում ամենամեծ մշտական բնակչություն ունեցող չորս ազգային փոքրամասնություններից յուրաքանչյուրի համար՝ եզդիներ, ռուսներ, ասորիներ և քրդեր: Խորհրդարանում չորս տեղ զբաղեցնում էին այս խմբերի ներկայացուցիչները:

ՄԱՍ 4. ՊԱՇՏՈՆԵԱԿԱՆ ԿՈՌՈՒՊՑԻԱ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅԱՆ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Օրենքով պաշտոնեական կոռուպցիայի համար սահմանված են քրեական պատժամիջոցներ: Այնուհանդերձ, շարունակվում էին հաղորդումները համակարգային կոռուպցիայի վերաբերյալ՝ իշխանության բոլոր երեք ճյուղերում: Մայիսի «թավշյա հեղափոխությունից» հետո նոր կառավարությունը կոռուպցիայի դեմ պայքարելու նպատակով քննություններ սկսեց, որոնք բացահայտեցին համակարգային կոռուպցիայի դրսևորումներ հանրային և մասնավոր կյանքի գրեթե բոլոր ոլորտներում: ՀԲԾ-ի կողմից հարուցվեցին բազմաթիվ քրեական գործեր նախկին պետական պաշտոնյաների, նրանց ազգականների, ինչպես նաև պատգամավորների կողմից թույլ տրված ենթադրյալ կոռուպցիոն հանցանքների վերաբերյալ, որտեղ մի քանի հազարից միլիոնավոր ամերիկյան դոլարների մասին էր խոսք գնում:

Կոռուպցիա. Բազմաթիվ լրատվական հրապարակումներ բացահայտում էին համակարգային կոռուպցիան տարբեր ոլորտներում, այդ թվում՝ շինարարություն, հանքարդյունաբերություն, հանրային կառավարում, խորհրդարան, դատական համակարգ, գնումների գործընթաց, պետության կողմից տրվող դրամաշնորհներ: Կային նաև պնդումներ պետական միջոցների

յուրացման, կասկածելի գործարքներում պետական պաշտոնյաների ներգրավվածության և կառավարության հետ կապեր ունեցող ընկերություններին տրված հարկային և մաքսային արտոնությունների մասին:

Ըստ վարչապետի կոռուպցիայի դեմ պայքարի հարցերով խորհրդականի մայիսի 7-ից օգոստոսի 10-ն իրավապահների և հարկային մարմինների կողմից բացահայտվել են 41.7 միլիարդ ՀՀ դրամի (համարյա 87 միլիոն ԱՄՆ դոլար) խախտումներ, որոնք ներառում են պետությանը հասցված վնասը, յուրացված միջոցները, պաշտոնեական դիրքի չարաշահումը և կաշառքը: Առավել հնչեղ էին խորհրդարանականների, կապեր ունեցող քաղաքական գործիչների և նրանց բիզնես հոլդինգների կողմից հարկերի ոչ ամբողջական վճարումներին ու անբացատրելի հարստությանը վերաբերող գործերը: Բնորոշ օրինակներից մեկը պատգամավոր Սամվել Ալեքսանյանի հետ կապված «Երևան Սիթի» սուպերմարկետների ցանցի կողմից տասնյակ միլիոնների հասնող հարկերի չվճարման բացահայտումն էր:

Կոռուպցիոն այլ գործերով քննվում էին միջոցների յուրացման կամ պետական միջոցների վատնման դեպքեր, այդ թվում՝ զինված ուժերի հետ կապված գնումների պայմանագրեր, համայնքային բյուջեներ և սոցիալական նպաստների բաշխում:

Հունիսին Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովը հրապարակեց Բարձրաստիճան պաշտոնյաների շահերի բախման մասին ուսումնասիրության արդյունքները 2014-17թթ. համար: Հանձնաժողովը բացահայտել էր 709 գնման պայմանագիր, որոնք կնքվել էին պաշտոնյաների համար փոխկապակցված անձ հանդիսացող անձանց/կառույցների հետ: Ընդ որում, դրանց կեսից ավելին մեկ աղբյուրից գնման պայմանագրեր էին:

Ֆինանսական հայտարարագրում. Օրենքով պահանջվում է, որ բոլոր Բարձրաստիճան պետական պաշտոնյաները և նրանց ընտանիքի անդամները տարեկան կտրվածքով ներկայացնեն գույքի և եկամուտների հայտարարագրեր. սրանք ինտերնետում մասնակիորեն հասանելի են եղել հանրությանը: 2017թ. հուլիսին գործողության մեջ մտած փոփոխությունների համաձայն Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովը ձեռք բերեց իրավասություն ու գործիքներ մասնակիորեն ստուգել հայտարարագրերի բովանդակությունը, այդ թվում օգտվել համապատասխան տվյալների շտեմարաններից և կիրառել վարչական պատժամիջոցներ կամ քրեական հանցանքի տարրեր նկատելու դեպքում գործն ուղղորդել իրավապահ մարմիններին: Մայիսին տեղի ունեցած կառավարության փոփոխությունից հետո Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովը ոչ ամբողջական կամ ուշ ներկայացված հայտարարագրերի համար տույժեր է կիրառել պաշտոնյաների նկատմամբ:

2017թ. հունիսին ընդունված օրենքի համաձայն տվյալների հավաստիության ամբողջական ստուգումը, ինչպես նաև կոռուպցիայի կանխմանն ուղղված այլ գործառնությունների ապահովումը պետք է իրականացվի Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից:

Հանձնաժողովը, որն անկախ կոլեգիալ մարմին է, հաշվետու է խորհրդարանին և իրավասու է ունենալ 5 անդամ, որոնք նշանակվում են 6 տարի ժամկետով: Այն փոխարինում է Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովին և օժտված է պաշտոնական բարեվարքության խթանման, հակակոռուպցիոն քաղաքականության մշակման և հակակոռուպցիոն իրազեկվածության մեծացման ու ուսուցումների ապահովման լայն իրավասություններով: Թեպետ այս կառույցը տարեվերջի դրությամբ պետք է արդեն լիարժեք գործեր, սակայն տարեվերջին այն դեռևս չէր ձևավորվել:

2017թ. հուլիսին գործողության մեջ մտավ Ապօրինի հարստացումը քրեականացնող օրենքը: Բազմաթիվ պաշտոնյաներ՝ դատավորներ, պատգամավորներ և նրանց կանայք/ամուսինները հայտարարագրել են եկամուտների ու ակտիվների անբացատրելի մեծ գումարներ, այդ թվում՝ մեծ անձնական նվիրատվություններ և փոխառություններից ստացվող միջոցներ: Մայիսին կառավարության փոփոխությունից հետո իշխանությունների կողմից սկսվեցին մի քանի քննություններ՝ կապված հայտարարագրերում առկա անհամապատասխանությունների կամ անբացատրելի հարստության փաստերով: Օգոստոսի 10-ին վարչապետի առաջին տեղակալ Արարատ Միրզոյանը հայտարարեց, որ կոռուպցիայի և յուրացումների հետևանքով երկրից դուրս բերված ակտիվները ետ վերադարձնելու հարցում տեխնիկական և խորհրդատվական աջակցության ստանալու համար դիմել են Համաշխարհային բանկի Գողացված ակտիվների վերականգնման նախաձեռնությանը և ՄԱԿ-ի Թմրամիջոցների ու հանցավորության դեմ պայքարի գրասենյակին:

Ապօրինի հարստացման առաջին քրեական գործի շրջանակում հունիսի 25-ին ձերբակալվեց վերջին 20 տարիներին նախկին նախագահ Սերժ Մարգարյանի թիկնագործի պետի պաշտոնը զբաղեցրած Վաչագան Ղազարյանը, երբ իրավապահները նրա կնոջ սեփականությունը հանդիսացող գիշերային ակումբում մեկ միլիոն ԱՄՆ դոլարից ավել կանխիկ միջոցներ գտան: Բռնելու պահին ԱԱԾ-ը հայտնաբերեց, որ նրա ձեռքի ճամպրուկում կար ավելի քան մեկ միլիոն ԱՄՆ դոլարին համարժեք կանխիկ դրամական միջոցներ և ևս 50.000 ԱՄՆ դոլար հայտնաբերվեց նրա մեքենայում: Ըստ քննիչների Ղազարյանը մտադիր էր իր հաշվից հանել ևս 1.7 միլիոն դոլար, իսկ կնոջ հաշվից՝ ևս 1.4 միլիոն դոլար: Ղազարյանը նշում էր, որ մոռացել էր էթիկայի հանձնաժողովին ներկայացրած հայտարարագրում ներառել այդ միջոցները: Ըստ ԱԱԾ-ի՝ Ղազարյանը պնդում էր, որ գումարն «հանել է տիրոջը վերադարձնելու համար», սակայն հրաժարվում էր հայտնել, թե ով էր տերը:

**ՄԱՍ 5. ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՎ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՐԴՈՒ
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՎՈՂ ՉԱՐԱՇԱՀՈՒՄՆԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Մայիսին կառավարության փոփոխությունների արդյունքում պետական պաշտոններում հայտնվեցին քաղաքացիական հասարակության որոշ գործիչներ: Մյուսները սակայն շարունակում էին իրենց հսկիչ գործառույթը՝ ուշադրության տակ պահելով նոր կառավարության գործունեությունը: Մարդու իրավունքների ոլորտի տեղական և միջազգային խմբերն ընդհանուր առմամբ գործել են առանց կառավարության սահմանափակումների՝ քննելով և հրապարակելով մարդու իրավունքների դեպքերի վերաբերյալ իրենց եզրակացությունները: Նոյեմբերի 8-ին «Իրազեկ քաղաքացիների միավորում» (ԻՔՄ) ՀԿ-ից Դանիել Իոնիսյանը ֆեյսբուքյան գրառմամբ տեղեկացրեց, որ Քննչական կոմիտեն քրեական գործ է հարուցել ԻՔՄ Փաստերի հավաքման հարթակի լրագրողներից մեկի դեմ: Լրագրողը Հրազդանի հանրակրթական դպրոցի տնօրենի հետ հեռախոսային խոսակցության ձայնագրությունն օգտագործել էր Փաստերի հավաքման հարթակի համար նյութը պատրաստելիս: Ձայնագրությունից պարզ էր դառնում, որ դպրոցի տնօրենը պլանավորում էր դպրոցի անձնակազմին և աշակերտներին տանել քաղաքապետի անկախ թեկնածուի («Իմ քայլը» դաշինքի պատգամավորի որդու) հանրահավաքին:

«Թավշյա հեղափոխությունից» հետո նախկին իշխանությունների հետ քաղաքական կապեր ունեցող որոշ ֆեյսբուքյան օգտատերեր և լրատվական հարթակներ վատաբանման արշավ սկսեցին «Բաց հասարակության հիմնադրամի» կողմից ֆինանսավորվող քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և պետական պաշտոնյաների դեմ, որոնք ըստ նրանց պնդումների ուղղակի կան անուղղակի կապ ունեին հիմնադրամի հետ:

Մարդու իրավունքների պաշտպանության պետական կառույցները. Մարդու իրավունքների պաշտպանի (օմբուդսմենի) գրասենյակը պատասխանատու է մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները բոլոր մակարդակի պետական մարմինների կողմից չարաշահումներից պաշտպանելու համար: Քաղաքացիական հասարակությունն ընդհանուր առմամբ դրական է գնահատել ՄԻՊ գրասենյակի աշխատանքն ապրիլ-մայիս ամիսներին տեղի ունեցող ցույցերի ընթացքում: Ըստ ՄԻՊ գրասենյակի կայքի տվյալների՝ ցույցերի շրջանում մարդու իրավունքների պաշտպանությունն ապահովելու համար գրասենյակն աշխատել է շուրջօրյա: Տարվա առաջին կեսի ՄԻՊ գրասենյակի տվյալներով գրանցվել է քաղաքացիների բողոքների ու այցելությունների աննախադեպ մեծ թիվ, ինչը վերագրվում է կառույցի նկատմամբ վստահության մեծացմանը և հանրության ունեցած նոր ակնկալիքներին:

ՄԱՍ 6. ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՉԱՐԱՇԱՀՈՒՄՆԵՐ ԵՎ ՄԱՐԴԿԱՆՑ ԹՐԱՖԻՔԻՆԳ

Կանայք

Բռնաբարություն և ընտանեկան բռնություններ. Բռնաբարությունը քրեական հանցագործություն է, որի համար դատապարտվելիս սահմանված առավելագույն պատժաչափը 15 տարվա ազատազրկումն է. ամուսնական բռնաբարության պարագայում գործում են բռնաբարության ընդհանուր հոդվածները: Ընտանեկան բռնությունը պատժվում է բռնության ընդհանուր հոդվածներով, սակայն իրավասու մարմինների կողմից ընտանեկան բռնության մասին պնդումների գերակշիռ մասի դեպքում չի եղել արդյունավետ քննություն կամ քրեական հետապնդում: Կանանց դեմ ուղղված ընտանեկան բռնությունը լայն տարածում ունի:

Եղել են հաղորդումներ, որ նման դեպքերում ոստիկանությունը, հատկապես Երևանից դուրս, դժկամությամբ է միջոցներ ձեռնարկել ու չի խրախուսել կանանց կողմից բողոքների ներկայացումը: Ըստ որոշ ՀԿ-ների ներկայացուցիչների՝ եթե կինը պնդում էր, որ իրեն բռնաբարել են, ապա երբեմն նրան հարցեր էին տալիս նախկին սեռական կյանքի մասին և նշանակում «կուսության փորձաքննություն»: Որոշ դեպքերում ոստիկանությունը հաղորդումը որակել է որպես ոչ էական, եթե փորձաքննությամբ պարզվել է, որ կինը կույս չի եղել: Գործող օրենսդրության համաձայն ընտանեկան բռնության դեպքերի մեծ մասը որակվել են որպես թեթև կամ միջին ծանրության գործեր, իսկ կառավարության կողմից չի ձևավորվել այս հանցանքներով զբաղվող բավարար քանակությամբ կին ոստիկանների և քննիչների կադրային բազա:

2010-2017թթ. «Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կռույիցիա» ՀԿ-ն արձանագրել է ներկայիս կամ նախկին զուգընկերոջ կամ ընտանիքի անդամի կողմից կանանց սպանության 50 դեպք: Տարեվերջի դրությամբ այս սպանությունների մասով ձեռնարկված միջոցների մասին տվյալներ առկա չէին: Բարձր հնչեղություն ստացած մի դեպքում նոյեմբերի 12-ին ամուսնու կողմից ծեծի ենթարկվելու հետևանքով մահացել էր 20-ամյա Քրիստինե Իսկանդարյանը: Երբ ոստիկանությունը պարզեց, որ ամուսինը նախկինում էլ էր ծեծել նրան, նա խոստովանեց ու կալանավորվեց: Տարվա առաջին կիսամյակում նման հանգամանքներում մահացել է 9-ը կին, սակայն այս գործերի քննության վերաբերյալ տվյալներ առկա չէին:

Քննչական կոմիտեի ներկայացրած տվյալներով տարվա առաջին կիսամյակում քննվել է ընտանեկան բռնության 258 գործ, իսկ 2017թ. նույն ժամանակահատվածի համար այդ թիվը կազմում էր 215: Գործերի գերակշիռ մասը կանանց նկատմամբ բռնություններ էին ամուսնու կամ տղամարդ զուգընկերոջ կողմից: Նույն ժամանակահատվածում 259 հոգի ճանաչվել են տուժող ընտանեկան բռնության գործերի շրջանակում, ընդ որում 33-ը եղել են անչափահաս:

Մարդու իրավունքների գեկույց 2018

ԱՄՆ պետքարտուղարություն, Ժողովրդավարության, մարդու իրավունքների և աշխատանքի բյուրո

Կանանց իրավունքների պաշտպանությունը ջատագովող ՀԿ-ներն առավելապես առցանց հարթակներում քննադատության էին ենթարկվում «ավանդական հայկական ընտանիքը» քանդելու և «արևմտյան արժեքներ» տարածելու համար:

Հուլիսի 1-ին գործողության մեջ մտավ 2017թ. ընդունված «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» օրենքը: Մարտի 29-ին կառավարությանն ուղղված նամակում ՄԱԿ-ի 2 հատուկ գեկուցողներն ու ՄԱԿ-ի աշխատանքային մի խումբ մտահոգություն էին հայտնում օրենքի վերաբերյալ՝ նշելով, որ այն ընտանեկան բռնության հետ բախվողների համար չի ապահովում բավարար պաշտպանություն և ունի որոշ դրույթներ, որոնք, ըստ էության, կարող են խաթարել բռնության կին գոհերի ֆիզիկական և հոգեկան առողջության առավելագույնս հասանելի մակարդակի իրավունքը և խոչընդոտել արդարության ու կրած վնասի դիմաց արդյունավետ փոխհատուցում ստանալու իրավունքին:

Ըստ ՀԿ-ների կառավարությունը չունեի ռեսուրսներ օրենքի լիարժեք իրականացման համար: Ոստիկանների համար սկսել էին ուսումնական ծրագիր իրականացնել, սակայն նրանք դեռևս չունեին համարժեք պատրաստվածություն և կամք՝ բռնարարների նկատմամբ օրենքը գործադրելու համար: Զոհերի համար կար միայն մեկ կացարան, որը սակայն չունեի բոլոր գոհերին սպասարկելու կարողություններ: Մայիսին կառավարության փոփոխությունից հետո ըստ ՀԿ-ների հաղորդումների աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը կոնկրետ քայլեր է ձեռնարկել համագործակցությունը մեծացնելու ուղղությամբ այնպիսի հարցերի շուրջ, ինչպիսին է օրինակ՝ երկրորդ կացարանի ֆինանսավորումը մարզերից մեկում և ՀԿ-ներին իրենց կայքում տեղեկություններ գետեղելու հնարավորություն տալը:

Մի շարք պատգամավորներ շարունակել են իրենց դժգոհությունը հայտնել օրենքի վերաբերյալ, իսկ Ծառուկյան դաշինքը ներկայացնող պատգամավոր Գևորգ Պետրոսյանի կողմից այն որակվել է որպես մի գործիք, որը թույլ կտա «ազատատենչ կանանց» ազատվել իրենց ամուսիններից և «հագուրդ տալ իրենց ֆանտազիաներին ընտանիքից դուրս»:

Սոցիալական հարթակներում տեղ են գտել կողմնակալ գենդերային գրառումներ ու խտրական մեկնաբանություններ ընդդեմ որոշ կին քաղաքական գործիչների, ինչպես նաև իրավապաշտպան և բնապահպան ակտիվիստների:

Սեռական ոտնձգություններ. Չնայած օրենքն անդրադառնում է անառակաբարո գործողություններին և անվայելուչ պահվածքին, սակայն այն կոնկրետ չի արգելում սեռական ոտնձգությունները: Դիտորդները կարծում են, որ աշխատավայրում կանանց հանդեպ սեռական ոտնձգությունները լայն տարածում ունեին և չէին ձեռնարկվում համարժեք միջոցներ կառավարության կողմից, որը չունեի լիարժեք գործող համընդգրկուն

աշխատանքային տեսչություն կամ որևէ այլ հարթակ, ուր կարևոր էին ներկայացվել այս ոտնձգությունների մասին հաղորդումները:

Փետրվարի 13-ին «Երկիր ծիրանի» ընդդիմադիր կուսակցությունից Երևանի ավագանու անդամ Մարինա Խաչատրյանն ավագանու նիստին բաժակով բերել էր Նուբարաշեն քրեակատարողական հիմնարկի կոյուղուց դեպի բնակելի թաղամաս արտահոսող ջրի նմուշը: Խաչատրյանը փորձեց ջուրը հանձնել այդ ժամանակվա քաղաքապետ տարոն Մարգարյանին՝ բարձրաձայնելու կոյուղաջրերի հետ կապված խնդրի վերաբերյալ թաղամասի բնակիչների դժգոհությունը: Մարգարյանի հրահրմամբ ավագանու այլ տղամարդ անդամներն ու անձնակազմի անդամները հարձակվեցին Խաչատրյանի վրա, նրան ծեծեցին և քարշ տվեցին, սպառնալով և սեռական վիրավորանքներ հնչեցնելով: Այդ օրերի իշխանական կուսակցությունը՝ Հայաստանի հանրապետական կուսակցությունն այդ արձագանքը համարեց համարժեք և չդատապարտեց բռնությունը: Իրավապահների կողմից հարուցվեց քրեական գործ:

Բնակչության վերահսկողության հարկադրանք. Չեն եղել հաղորդումներ հարկադրաբար հղիությունն ընդհատելու կամ ոչ կամավոր բեղմնականիման կիրառման մասին:

Խտրականություն. Տղամարդիկ և կանայք ունեն հավասար իրավական կարգավիճակ, սակայն գենդերային խտրականությունը դեռևս խնդրահարույց էր և՛ պետական, և՛ մասնավոր հատվածներում: Եղել են կանանց հանդեպ խտրականության վերաբերյալ հաղորդումներ մասնագիտության ու զբաղվածության հարցերի հետ կապված: Շարունակում էր ցածր մնալ կանանց ներկայացվածությունը ղեկավար պաշտոններում՝ կառավարության բոլոր օղակներում ու մակարդակներում:

Կառավարության կողմից շոշափելի միջոցներ չեն ձեռնարկվել կապված Համաշխարհային բանկի 2015թ. ուսումնասիրության հետ, որով դիտարկվել էին ավագ դպրոցի ուսումնական նյութերն ու դասընթացները և պարզվել է, որ գրքերում ներկայացման բոլոր ձևերում՝ տեքստեր, նկարագրողումներ, նախապատվություն է տրվում տղամարդկանց, մինչդեռ կանայք առավել քիչ տեսանելի էին ու պատկերված էին կարծրատիպային եղանակով:

Ըստ Համաշխարհային բանկի 2016թ. Հայաստանում գենդերային իրավիճակի գնահատման աշխատաշուկայում մասնակցության տարբերությունը կանանց ու տղամարդկանց միջև կազմում է շուրջ 17 տոկոս: Չնայած կանանց և տղամարդկանց վարձատրության տարբերության էական կրճատմանը, այնուհանդերձ կանայք դեռևս շարունակում էին 36 տոկոսով ավելի քիչ վաստակել, քան տղամարդիկ: Սակավաթիվ էին մասնավոր հատվածում առաջնորդող դիրք զբաղեցնող կանայք, այդ թվում՝ ղեկավար և ձեռնարկատիրական պաշտոններում:

Գենդերով պայմանավորված պտղի սեռի խտրական քնտրություն. Ըստ Ազգային վիճակագրական ծառայության 2014թ. համեմատ ծնվելու պահին տղա-աղջիկ 114-100

հարաբերակցությունն իջել է, և 2017թ. կազմել է 110 տղա 100 աղջիկ: Օրենքի համաձայն բժիշկները պարտավոր են հղիությունն ընդհատել ցանկացող կանանցից պարզել հղիության ընդհատման դրդապատճառները և մերժել, եթե դա պայմանավորված է պտղի սեռի ընտրությամբ:

Երեխաներ

Ծննդի գրանցում. Քաղաքացիությունը երեխաներին անցնում է ծնողներից մեկից կամ երկուսից: Կա կենտրոնացված համակարգ, որի միջոցով գեներացվում է ծննդյան մասին բժշկական տեղեկանք՝ գրեթե անհնար դարձնելով ծննդյան գրանցումից խուսափելը: Ծնունդների չգրանցման դեպքեր հիմնականում տեղ են գտել եզրիական և քրդական համայնքներում, որտեղ ընդունված են տնային ծնունդները:

Կրթություն. Թեպետ կրթությունն անվճար է և պարտադիր մինչև 12-րդ դասարան, սակայն գործնականում այն չի կիրառվել համընդհանուր կերպով: Կարիքավոր ընտանիքների և համայնքների երեխաների համար հասանելի չեն եղել վաղ տարիքի կրթական ծրագրերը՝ չնայած նախադպրոցական կրթության շրջանակն ընդլայնելու կառավարության ջանքերին: Ըստ Ազգային վիճակագրական ծառայության տվյալների երկրում նախակրթարաններ հաճախում են մինչև 5 տարեկան երեխաների 29 տոկոսը, բայց գյուղական բնակավայրերի համար այդ թիվը կազմում էր 17 տոկոս: Շատ հեռավոր գյուղական համայնքներ, մասնավորապես՝ 400 հոգուց պակաս բնակչությամբ համայնքները, չունեն նախակրթարաններ: Էթնիկ փոքրամասնական խմբերի, մասնավորապես՝ եզրիների, քրդերի ու մոլդկանների երեխաների շրջանում շատ ավելի ցածր է դպրոցի և դասերի հաճախելիության ցուցանիշը և բարձր է իններորդ դասարանից հետո ուսումը կիսատ թողնելու ցուցանիշը: ՅՈՒՆԻՍԵՖ-ը մտահոգություն էր հայտնել տեղական համայնքում Միրիայից, Իրաքից և Ուկրաինայից ժամանած փախստական երեխաների ինտեգրման վերաբերյալ, ինչը պայմանավորված է մշակութային ու լեզվական խոչընդոտները հաղթահարելու հարցում պատշաճ օժանդակության բացակայությամբ:

Ըստ Հասարակական դիտորդների խմբի՝ տարեսկզբին «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում կալանքի տակ գտնվող կամ ազատազրկված 7 անչափահասների համար ապահովված չէր կրթության հասանելիությունը: Դեկտեմբերի դրությամբ այս թիվը նվազել էր՝ դառնալով 2:

Երեխաների նկատմամբ բռնություն. Ըստ ՅՈՒՆԻՍԵՖ-ի երեխաների հանդեպ բռնությունների վերաբերյալ պաշտոնական ու միասնական տվյալների բացակայությունը սահմանափակում էր կառավարության հնարավորությունները մշակելու համապատասխան արձագանքման ազգային ծրագրեր կամ կանխարգելման միջոցներ: Չեն եղել պաշտոնական ուղղորդման

մեխանիզմներ բռնության, այդ թվում՝ սեռական բռնության գոհ հանդիսացող երեխաների համար, իսկ երեխաների հետ աշխատող մասնագետների համար ուղղորդման պարտադիր պահանջ չի եղել, բացառությամբ՝ բժիշկների, որոնք երեխաների ցանկացած մարմնական վնասվածքների մասին պարտավոր են ուստիկանությանը հաղորդում տալ:

Օրենքն ուրվագծում է ուստիկանության և սոցիալական ծառայությունների դերն ու պատասխանատվությունն ընտանիքում երեխաների նկատմամբ բռնության վաղ բացահայտման հարցում: Օրենքը գործողության մեջ է մտել հուլիսի 1-ից, սակայն կառավարությունը դեռ չէր ապահովում ծառայություններ ընտանեկան բռնության գոհերին, այդ թվում՝ կանանց և երեխաներին:

Վաղ և պարտադրված ամուսնություն. Օրենքով սահմանված ամուսնական նվազագույն տարիքը 18-ն է: Աղջիկների շրջանում վաղ ամուսնություններն առավել տարածված են եզրիական համայնքներում, սակայն կառավարությունը դրանց ծավալն արձանագրելուն կամ այդ պրակտիկան վերացնելուն ուղղված քայլեր չի ձեռնարկել:

Երեխաների սեռական շահագործում. Օրենքն արգելում է երեխաների սեռական շահագործումը և խախտումների դեպքում սահմանվում է 7-15 տարվա ազատազրկում: Մանկական պոռնկագրությունը պատժվում է մինչև յոթ տարի ազատազրկմամբ: Սեռական համաձայնության նվազագույն տարիք է համարվում 16 տարին:

Երեխաների վաճառքի, մարմնավաճառության և մանկական պոռնկագրության հարցերով ՄԱԿ-ի հատուկ զեկուցողի 2016թ. փետրվարի զեկուցում նշվում էր, որ թեպետ պաշտոնական վիճակագրությամբ հիշատակվում են երեխաների շահագործման ու վաճառքի սակավաթիվ դեպքեր, կան բազմաթիվ չբացահայտված և չհաղորդված դեպքեր, ինչը պայմանավորված է օրենսդրության, ուսուցման, իրազեկման բարձրացման, բացահայտման և հաշվետվությունների ներկայացման հետ կապված բացերով:

Հաստատություններում գտնվող երեխաներ. Ըստ ՅՈՒՆԻՍԵՖ-ի և մյուս դիտորդների՝ հաստատություններում գտնվող երեխաների համար առկա էր ֆիզիկական ու հոգեբանական բռնության վտանգ մյուս երեխաների ու հաստատության անձնակազմի կողմից: Հյուսան Ռայթս Վոտչի 2017թ. փետրվարի զեկույցի համաձայն հաստատությունների բեռնաթափման և ներառական կրթության մասով կառավարության քաղաքականությունը խտրական է և հաշմանդամություն ունեցող երեխաների համար չի ապահովում այլ երեխաների հետ հավասար իրավունքներ ու արտոնություններ:

2017թ. դեկտեմբերին փոփոխություններ եղան ընտանեկան օրենսգրքում՝ ձևավորելով ընտանեկան խնամքի տարբերակներ հաստատություններում գտնվող երեխաների համար, մասնավորապես՝ դիվերսիֆիկացվեց խնամատար ընտանիքի ինստիտուտը և բարելավվեցին որդեգրման վերաբերյալ դրույթները. Փոփոխությունները գործողության մեջ մտան տարվա կեսին և արդյունքում խնամատար ընտանիքներին ուղղվող պետական ֆինանսավորումը

քառապատկվեց: Շարունակվում էր կյանքի դժվարին հանգամանքներում հայտնված և առանց ծնողական խնամքի մնացած երեխաների շուրջօրյա խնամքի հաստատությունների վերակազմավորումը: Բացառությամբ հաշմանդամություն ունեցող երեխաների, շուրջօրյա խնամքի հաստատություններում գտնվող երեխաների թիվը շարունակում էր նվազել:

ՅՈՒՆԻՍԵՖ-ը մտահոգություններ էր հնչեցրել հաստատություններում հաշմանդամություն ունեցող անձանց, այդ թվում՝ հատուկ հաստատություններում գտնվող մտավոր և սցիալ-հոգեբանական խնդիրներ ունեցող երեխաների նկատմամբ ոչ մարդկային և նվաստացուցիչ վերաբերմունքի, ինչպես նաև անտեսման և բուժման կամ պատժելու նպատակով ֆիզիկական սահմանափակումների կիրառման վերաբերյալ: Կային նաև մտահոգություններ բողոքների համակարգի ոչ արդյունավետ ու ոչ համարժեք լինելու վերաբերյալ, ինչպես նաև հաստատությունների մշտադիտարկման բացակայության վերաբերյալ: Սոցիալական հարթակներում եղել են հաղորդումներ, որ կառավարության կողմից գիշերօթիկ դպրոցների փակումը՝ առանց ժամանակին ապահովելու այլընտրանքային սոցիալական խնամքի ծառայություններ ու հիմնական անհրաժեշտություններ, վտանգում է երեխաների բարօրությունն ու կրթության հասանելիությունը:

Ըստ ԱՄՔՈՐ ՀԿ-ի հաստատությունների բեռնաթափման արդյունքում հաստատություններից դուրս եկած երեխաներն ավելի վտանգված էին հարկադիր մուրացկանության, հարկադիր աշխատանքի, թրաֆիքինգի մեջ ներքաշվելու և ընտանիքում բռնության ենթարկվելու տեսակետից: ՀԿ-ի կողմից ներկայացվում էր մի օրինակ, երբ խորթ հայրը հաստատությունից վերադարձած երեխային ստիպել էր զբաղվել մուրացկանությամբ: «Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կռախիցիս» ՀԿ-ն նշում էր, որ երեխային ընդունող ընտանիքում տեղավորելուց հետո կառավարությունը դադարել է որևէ վերահսկողություն ապահովել երեխայի կամ ընտանիքի նկատմամբ:

Եզդիաբնակ մի գյուղում ծնողները բողոքում էին դպրոցում ուսուցիչների և դպրոցի տնօրենի կողմից իրենց երեխաների հանդեպ խտրական վերաբերմունքից: Նրանք նաև պնդում էին, որ ուսուցիչներն ու տնօրենը, ովքեր էթնիկ եզդիական համայնքից չէին, դպրոցականների համար չէին ապահովում որակյալ հանրակրթություն և ըստ հաղորդումների արհամարհանքով էին արտահայտվում էթնիկ եզդիների վերաբերյալ:

Երեխաների միջազգային առևանգում. Երկիրը միացել է «Երեխաների միջազգային առևանգման քաղաքացիական ասպեկտների մասին» 1980 թ. Հաագայի կոնվենցիային: Տես Ծնողների կողմից երեխաների միջազգային առևանգումների վերաբերյալ ԱՄՆ պետքարտուղարության ամենամյա զեկույցը՝ <https://travel.state.gov/content/travel/en/International-Parental-Child-Abduction/for-providers/legal-reports-and-data.html>:

Հակասեմականություն

Երկրի հրեա ազգաբնակչությունը կազմում է 500-1000 հոգի: Տարվա ընթացքում հակասեմական գործողությունների մասին հաղորդումներ չեն եղել, սակայն «Թավշյա հեղափոխությունից» հետո որոշ հակասեմական մեկնաբանություններ եղան սոցիալական հարթակներում ուղղված կառավարության ներկայացուցիչներին ու ակտիվիստներին: Կառավարությունն այս մեղադրանքներին չարձագանքեց:

Մարդկանց թրաֆիկինգ

Տես Պետքարտուղարության Մարդկանց թրաֆիկինգի մասին զեկույցը <http://www.state.gov/j/tip/rls/tiprpt> էջում:

Հաշմանդամություն ունեցող անձինք

Օրենքով արգելվում է որևէ տեսակի հաշմանդամություն ունեցող մարդկանց հանդեպ խտրականություն կիրառել աշխատանքում, կրթության, առողջապահության հասանելիության և պետական այլ ծառայությունների տրամադրման գործում, սակայն խտրականությունը շարունակում է մնալ խնդրահարույց: Օրենքով և կառավարության հատուկ որոշմամբ պահանջվում է, որ նոր և վերակառուցվող շենքերը, այդ թվում՝ դպրոցները ֆիզիկապես հասանելի լինեն հաշմանդամություն ունեցող անձանց համար: Գործնականում շատ քիչ շենքեր ու հաստատություններ են եղել հասանելի, անգամ եթե դրանք նորակառույց են կամ նորոգված են: Բազմաթիվ հասարակական շինություններ, այդ թվում՝ դպրոցներ, մանկապարտեզներ եղել են ֆիզիկապես ոչ հասանելի: Այս անհասանելիության հետևանքով հաշմանդամություն ունեցող անձինք չեն կարողացել իրացնել իրենց ընտրական իրավունքը, քանի որ ընտրությունների ժամական այս շենքերը հաճախ ծառայում են որպես ընտրական տեղամասեր: Համաձայն ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ընտրական դիտորդների զեկույցի՝ դեկտեմբերի 9-ի արտահերթ խորհրդարանական ընտրություններում ֆիզիկական հաշմանդամություն կամ սահմանափակ շարժունակություն ունեցող անձանց համար ոչ հասանելի են եղել դիտարկված տեղամասերի 71 տոկոսը:

Չնայած հանրակրթության մասին օրենքը սահմանում է, որ մինչև 2025թ. հաշմանդամություն ունեցող երեխաների համար ընդհանուր կրթությունից անցում է կատարվելու դեպի ներառական կրթություն և չնայած ներառական կրթության միտումների մեծացմանը՝ հաշմանդամություն ունեցող շատ երեխաներ շարունակում էին մնալ կրթական սեգրեգացված միջավայրում և նրանց համար անհասանելի էր ներառական կրթությունը: Բազմաթիվ ՀԿ-ներ հայտնում էին, որ դպրոցներում ապահովված չէ ֆիզիկական հասանելիությունը, ուսումնական նյութերի հասանելիությունը և քիչ ջանքեր են գործադրվում ներառական դպրոցներում հաշմանդամություն ունեցող երեխաների համար ողջամիտ հարմարություններ

ապահովելու ուղղությամբ: Բացի այդ, ուսուցիչների համար չի ապահովվում պատշաճ վերապատրաստում ներառական կրթության հարցերի շուրջ:

Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության պատասխանատվությունը վերապահված է Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը, որը մինչև մայիս արդյունավետ կերպով չի իրականացրել իր այս գործառույթը: Օրինակ՝ 2017թ. սեպտեմբերին կառավարությունը որոշում ընդունեց հաշմանդամություն ունեցող անձանց լսողական սարքերի ու անվասայլակների փաստացի տրամադրման փոխարեն նրանց տրամադրել գնման վկայագրեր: Այնուհանդերձ, եղան հաղորդումներ, որ վկայագրերի արժեքը չէր ծածկում լսողական սարքերի ու անվասայլակների շուկայական արժեքը, ինչը ֆինանսական խնդիր էր ստեղծում դրանց կարիքն ունեցող անձանց համար:

Բոլոր տեսակի հաշմանդամություն ունեցող անձիք խտրականության են հանդիպել կյանքի բոլոր ոլորտներում՝ այդ թվում՝ բուժօգնության, սոցիալ-հոգեբանական վերականգնողական, կրթության, տրանսպորտի, հաղորդակցության, զբաղվածության, սոցիալական պաշտպանվածության և մշակութային միջոցառումների ու համացանցի օգտագործման հասանելիության հարցերում: Տեղեկատվության ու հաղորդակցության հասանելիության խնդիրն առավել մեծ էր տեսալսողական խնդիրներ ունեցողների համար: Առավել մեծ է եղել խտրականությունը հաշմանդամություն ունեցող կանանց նկատմամբ, մասնավորապես սոցիալական ներառման, բուժօգնության ու վերարտադրողական ծառայությունների, զբաղվածության և կրթության հասանելիության մասով:

Ստանդարտներից ցածր էին նաև առավել լուրջ հաշմանդամություն ունեցող անձանց համար նախատեսված հիվանդանոցային, հաստատություններում խնամքի և այլ ինստիտուցիոնալ պայմանները:

Հաշմանդամության կարգի հիման վրա որոշվում է տարբեր սոցիալական նպաստների նշանակման հարցը: Լրատվամիջոցներում հաղորդումներ են եղել Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ներքո հաշմանդամություն կարգերը սահմանող պետական մարմնի՝ Բժշկասոցիալական փորձաքննության հանձնաժողովի հետ կապված կոռուպցիոն դրսևորումների ու կամայական որոշումների մասին: 2016թ. Ազգային անվտանգության ծառայությունը կաշառք պահանջելու համար ձերբակալեց և մեղադրանք առաջադրեց հանձնաժողովի նախագահ Արմեն Մոդոյանին և 16 աշխատակիցների: Տարեվերջի դրությամբ դատաքննությունը դեռ ընթացքի մեջ էր:

Տարեվերջի դրությամբ Քննչական կոմիտեն սոցիալական ծառայություններ (այդ թվում՝ հաշմանդամության կենսաթոշակներ) ապահովող գրասենյակների կոռուպցիոն գործելակերպերի հետ կապված հարուցել էր 92 քրեական գործ: Մեղադրանք էր ներկայացված 50 հոգու:

Սեռական կողմնորոշման ու գենդերային ինքնության վրա հիմնված բռնության դրսևորումներ, խտրականություն և այլ չարաշահումներ

Հակախտրականական օրենսդրական դրույթները սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիմքով ԼԳԲՏԻ անձանց համար պաշտպանություն չէին ապահովում: Չկային ատելության հողի վրա կատարված հանցագործությունների դեմ պայքարող օրենքներ կամ այլ քրեական դատական մեխանիզմներ, որոնք կօգնեին ԼԳԲՏԻ համայնքի անդամների դեմ գործած հանցանքներով քրեական հետապնդում իրականացնելիս: Հասարակության կողմից սեռական կողմնորոշման ու գենդերային ինքնության վրա հիմնված խտրականության դրսևորումը բացասաբար է անդրադարձել կյանքի բոլոր բնագավառներում՝ զբաղվածություն, բնակապահովում, ընտանեկան հարաբերություններ, կրթություն ու առողջապահական ծառայությունների հասանելիություն: Տրանսգենդեր անձինք հատկապես խոցելի էին ֆիզիկական ու հոգեբանական բռնությունների ու հալածանքների տեսանկյունից:

Տարվա ընթացքում «Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք» (ՓԻՆՔ Հայաստան) ՀԿ-ն արձանագրել է ԼԳԲՏԻ անձանց դեմ ուղղված մարդու իրավունքների խախտման 27 դեպք, սակայն տուժողներից միայն 4-ն են, որ օգնության համար դիմել են ՄԻՊ գրասենյակին, իսկ իրավապահներին որևէ մեկը չի դիմել: Երեք գործ ուղարկվել է դատարան, իսկ 1-ը կարճվել է, քանի որ մեղադրյալն ինքնասպանություն է գործել:

Օգոստոսի 14-ին մի քանի տրանսգենդեր անձանց կողմից զբոսայգում իրենց վրա հարձակում գործելու մասին հաղորդումից հետո ոստիկանությունը ձերբակալեց մի կասկածյալի: Նույն օրը ոստիկանությունը հրապարակեց մի տեսանյութ, որտեղ տրանսգենդեր անձինք փորձում էին հարձակում գործել կասկածյալի վրա, երբ նա ձերբակալված էր ոստիկանության շենքում, և տեսանյութում մեկնաբանություն էր գնում, որ նրանք թույլ են տվել բռնություն ոստիկանների նկատմամբ: Տեսանյութը ներառում էր տրանսգենդեր անձանց անուններն ու լուսանկարները: Ոստիկանությունը տեսանյութում երևացող երկու տրանսգենդեր անձանց ձերբակալեց: Ըստ ձերբակալվածների հայտարարության իրենք 6 ոստիկանների կողմից ծեծի էին ենթարկվել և ավելի քան 72 ժամ ձեռնաշղթաներով պահվել ոստիկանական բաժնում: Ավելի ուշ, ոստիկանությունը տրանսգենդեր անձանցից մեկին ազատ արձակեց: Օգոստոսի 16-ի երկրորդ տրանսգենդեր անձը տեղափոխվեց «Նուբարաշեն» ՔԿՀ: Քրեակատարողական հիմնարկի կողմից հաջորդիվ գրություն ուղարկվեց գլխավոր դատախազությանը, որ հիմնարկ ընդունելու պահին կալանավորվածի մարմնի վրա եղել են ֆիզիկական բռնության հետքեր: Կալանավորված անձին առաջադրվեցին խուլիգանության (պատժվում է մինչև 7 տարվա ազատազրկմամբ) և իշխանության ներկայացուցչի նկատմամբ բռնության գործադրման (պատժվում է մինչև 5 տարվա ազատազրկմամբ) մեղադրանքներ: Ըստ ՀՔԾ-ի տրանսգենդեր անձին ծեծի ենթարկած ոստիկանների նկատմամբ հարուցվել է քրեական գործ խոշտանգման հատկանիշներով: Քննությանը տարեվերջի դրությամբ դեռ ընթացքի մեջ էր:

Օգոստոսի 3-ին Շուռնուխ գյուղում ԼԳԲՏԻ ակտիվիստներից մեկի ծնողների տանը հյուրընկալված 8 ընկերների վրա հարձակում գործեց մարդկանց շուրջ 30 հոգանոց մի խումբ և նրանց դուրս քշեցին գյուղից՝ հարվածելով, ոտքով խփելով, քարեր շարժելով և վիրավորական խոսքեր տեղալով: Ակտիվիստներից 6-ը հիվանդանոց տեղափոխվեցին: Տուժողները հարձակման մասին հաղորդում ներկայացրն ոստիկանությունում, որտեղ գործ հարուցվեց ծեծի ենթարկելու փաստով: Դեկտեմբերին ոստիկանությունը կարճեց գործը՝ հիմք ընդունելով նոյեմբերի համաներումը, թեպետ այս գործով որևէ մեկին դեռևս մեղադրանք ներկայացված չէր, իսկ ՓԻՆԲ Հայաստանից պնդում էին, որ մեղավորներին, որոնք գյուղի բնակիչներ էին, բոլորը գիտեին:

Նոյեմբերի 6-ին ԼԳԲՏ քրիստոնյաների եվրոպական ֆորումի կազմակերպչական թիմը և «Նոր Սերունդ» ՀԿ-ը հայտարարեցին, որ չեղարկվում է 2018թ-ի նոյեմբերի 15-18-ը Հայաստանում կայանալիք Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի ԼԳԲՏ քրիստոնյաների ֆորումը: Այս հանդիպմանը մասնակիցները գալու էին քննարկումների, կապեր հաստատելու ու աղոթք հնչեցնելու համար: Երբ ֆորումի անցկացման մասին լուրն հայտնի դարձավ, տեղի ու Ռուսաստանի հետ կապեր ունեցող բլոգերներն օգտագործեցին այդ տեղեկությունը հակա-ԼԳԲՏԻ տրամադրություններ ձևավորելու և ԼԳԲՏԻ համայնքի ու ֆորումի մասնակիցների նկատմամբ բռնության ու մահվան սպառնալիքներ հնչեցնելու համար: Ոստիկանության ներկայացուցիչները հանդիպում ունեցան «Նոր սերունդ» ՀԿ-ի հետ՝ քննության առնելու ֆորումի կազմակերպիչների և մասնակիցների անվտանգության ապահովման հետ կապված ռիսկերը: Ի վերջո, «Նոր սերունդ» ՀԿ-ը չեղարկեց ֆորումի անցկացումը՝ հանդես գալով հայտարարությամբ, որտեղ կար այսպիսի ձևակերպում. «Մենք վշտացած ու խորապես հիասթափված են ԼԳԲՏԻ անձանց հանդեպ քաղաքական բռնության, մահվան սպառնալիքների ու վանդալիզմի դրսևորումներից, որոնք իրական սպառնալիք են ստեղծում մեր մասնակիցների անվտանգությանը»:

Մի քանի միջազգային կազմակերպություններ, ՄԻՊ գրասենյակը և մի շարք քաղաքացիական հասարակության կազմակերպություններ հանդես եկան Շուռնուխի դեպքերը դատապարտող հայտարարություններով: Շատ ավելի մեծաթիվ էին սոցիալական հարթակներում ի պաշտպանություն շուռնուխցիների արված գրառումները, որտեղ քարկոծվում էին ԼԳԲՏԻ և մյուս փոքրամասնությունները: Ֆեյսբուքյան գրառումներից մեկում «Բարգավաճ Հայաստանը» ներկայացնող պատգամավոր Գևորգ Պետրոսյանը գրել էր. «պետք է մեր սուրբ հողից դուրս մղենք համասեռամուլներին, աղանդավորներին և նրանց պաշտպաններին»:

Ակնհայտ նույնասեռական տղամարդիկ ազատվում են զինվորական ծառայությունից: Ազատումը սակայն հիմնավորվում է հոգեյարդաբանական հետազոտման բժշկական եզրակացությամբ առ այն, որ անձի մոտ կա հոգեկան խանգարում, և այս մասին նշում էր կատարվում անձը հաստատող փաստաթղթերում, որը խոչընդոտ է աշխատանքի տեղավորման և վարորդական վկայական ձեռք բերելու հարցում: Զինված ուժերում ծառայող

նույնասեռական տղամարդկանց հանդեպ եղել են ֆիզիկական ու հոգեբանական ոտնձգություններ, ինչպես նաև շանտաժ:

ՄԻԱՎ-ի և ՁԻԱՀ-ի սոցիալական խարանք

Ըստ իրավապաշտպան խմբերի ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի առումով խոցելի համարվող անձանց, մասնավորապես մարմնավաճառների (այդ թվում՝ տրանսգենդեր) և թմրամոլների նկատմամբ կա խտրականության ու բռնության դրսևորում հասարակության կողմից, ինչպես նաև ոչ իրավաչափ վերաբերմունք ոստիկանության կողմից: ՄԱԿ-ի մարդու իրավունքների խորհրդի ֆիզիկական և հոգեկան առողջության առավելագույնս հասանելի մակարդակի իրավունքի հարցերով զեկուցողի հունիսին ներկայացրած զեկույցի համաձայն ամոթն ու խտրականությունը ՄԻԱՎ/ՁԻԱՀ ունեցող անձանց համար բուժման ու բուժառայություններ ստանալու խոշորագույն խոչընդոտն են առողջապահական միջավայրում:

ՄԱՍ 7. ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

ա) Միավորումներ կազմելու ազատությունը և կոլեկտիվ պայմանագիր կնքելու իրավունքը

Օրենքը պաշտպանում է անկախ միավորումներ կազմելու և դրանց անդամակցելու բոլոր աշխատողների իրավունքը՝ բացառությամբ բանակում ոչ քաղաքացիական ծառայողների և իրավապահ մարմինների աշխատակիցների: Օրենքը նաև սահմանում է գործադուլների իրավունք՝ նույն բացառություններով, և թույլատրում է կոլեկտիվ պայմանագրերի կնքում: Օրենքը սահմանում է, որ գործադուլ սկսելուց առնվազն 7 օր առաջ պետք է այդ մասին ծանուցել գործատուին և մինչ այդ պետք է պարտադիր հաշտեցման գործընթաց լինի, ինչպես նաև աշխատողների 2/3-ի համաձայնությունը՝ արտահայտված գաղտնի քվեարկության միջոցով: Օրենքը նախատեսում է, որ միություններին անդամակցելու պատճառով աշխատողի իրավունքները չեն կարող սահմանափակվել: Աշխատանքային օրենսգրքում ներկայացվում են այն հիմնավոր պատճառները, որոնց հիման վրա աշխատողին կարող են հեռացնել աշխատանքից, և այդ շարքում միութենական գործունեությունն ընդգրկված չէ:

2017թ. ապրիլին աշխատողների առողջության և անվտանգության ապահովման բնագավառում առաջադրվող պահանջների իրականացումը երաշխավորելու նպատակով կառավարության որոշմամբ ձևավորվեց Առողջապահական տեսչական մարմին (ԱՏՄ)՝ Առողջապահության նախարարության կազմում: Թեպետ սեպտեմբերի դրությամբ ԱՏՄ վերջնական կազմն ու լիազորությունների շրջանակը դեռ քննարկվում էին, սակայն կառույցի

Մարդու իրավունքների զեկույց 2018

ԱՄՆ պետքարտուղարություն, Ժողովրդավարության, մարդու իրավունքների և աշխատանքի բյուրո

կանոնադրությամբ կային սահմանափակ հղումներ աշխատանքային օրենսդրությանն ու աշխատանքային իրավունքներին, ինչպես նաև նախատեսվում էին տեսչական ստուգումներ անցկացնելու սահմանափակ իրավասություններ՝ կապված անչափահասների, հղի կանանց և կրծքով կերակրող ու երեխայի խնամքով զբաղվող կանանց աշխատանքային իրավունքների պաշտպանության երաշխավորման հետ: Կառավարությունն արդյունավետորեն չի կիրառել միավորումներ կազմելու և կոլեկտիվ պայմանագրերի մասին օրենքները և չի սահմանել, թե որ կառույցն է այդ օրենքների կիրարկման համար պատասխանատու:

Երկրում գործատուների դիմադրության, գործազրկության բարձր մակարդակի և վատ տնտեսական պայմանների պատճառով աշխատավորական կազմակերպությունները մնացել են թույլ: Աշխատողներն աշխատանքային իրավունքի խախտումների մասին չեն հայտնել՝ վախենալով գործատուի հաշվեհարդարից և ընդհանուր առմամբ չեն ներկայացրել պաշտոնական բողոքներ: Արհմիությունները հիմնականում պասիվ են եղել, իսկ հանքարդյունահանման ու քիմիական արդյունաբերության ոլորտի արհմիությունները դիտարկվել են որպես սեփականատերերի կողմից նշանակված անձինք: Ըստ տեղական դիտորդների՝ պաշտոնապես արհեստակցական միություն ստեղծելու համար գործնականում պահանջվում է գործատուի ոչ պաշտոնական համաձայնությունը: Մայիսին կառավարության փոփոխություններից հետո երկրում տեղի ունեցան մի շարք բողոքի ակցիաներ, որտեղ աշխատողները պահանջում էին ավելի բարձր վարձատրություն և աշխատանքային ավելի լավ պայմաններ: Նոյեմբերին կառավարությունը հավանություն տվեց պետական կենսաթոշակների մասին օրենքում փոփոխություններ կատարելու նախաձեռնությանը: Աշխատանքի և սոցիալական հարցերի փոխնախարար Արսեն Մանուկյանը նշում էր, որ օրինագիծը միտված է կենսաթոշակառուների շրջանում ծայրահեղ աղքատության վերացմանը՝ 2019թ.-ից կենսաթոշակը ծայրահեղ աղքատության շեմին հասցնելու միջոցով:

բ) Հարկադիր կամ ստրկական աշխատանքի արգելում

Օրենքով արգելվում են և քրեորեն պատժելի են համարվում հարկադիր կամ ստրկական աշխատանքի բոլոր տեսակները, սակայն օրենքում «հարկադիր աշխատանքի» սահմանում չի տրվում: Թեպետ կառավարությունն արդյունավետ կերպով քրեական հետապնդում է իրականացրել աշխատանքային թրաֆիքինգի գործերով, սակայն ռեսուրսները, ստուգումներն ու լուծումները համարժեք չէին, որպեսզի բացահայտվեին հարկադիր աշխատանքի դեպքերի ողջ շրջանակը՝ հիմնականում պայմանավորված աշխատանքի ոլորտում տեսչական ստուգումների արդյունավետ մեխանիզմի բացակայությամբ: Աշխատանքային թրաֆիքինգի համար նախատեսված է բավարար խիստ պատիժ՝ նման խախտումները կանխելու համար:

Տես նաև Մարդկանց թրաֆիքինգի մասին Պետքարտուղարության գեկույցը www.state.gov/j/tip/rls/tiprpt էջում:

զ) Երեխայի աշխատանքի արգելում և աշխատելու նվազագույն տարիք

Գոյություն ունեն օրենքներ ու կարգեր, որոնք երեխաներին աշխատավայրում պաշտպանում են շահագործումից: Աշխատանքի անցնելու նվազագույն տարիքը 16-ն է, սակայն ծնողի կամ խնամակալի թույլտվությամբ երեխաները կարող են աշխատել 14 տարեկանից: 14 տարին չլրացած երեխաներին օրենքը թույլատրում է ընդգրկվել ստեղծագործական աշխատանքում՝ կինեմատոգրաֆիայի, մարզական, թատերական և համերգային կազմակերպություններում, կրկեսում, հեռուստատեսությունում և ռադիոյում: 14-16 տարեկան երեխաների համար սահմանված է 24-ժամյա առավելագույն շաբաթական աշխատաժամանակ, իսկ 16-18 տարեկանների համար՝ 36 ժամ: 18 տարին չլրացած անձանց համար արգելվում է արտաժամյա աշխատանքը, աշխատանքը վնասակար, դժվարին ու վտանգավոր պայմաններում, աշխատանքը տոն օրերին և գիշերային ժամերին: Համապատասխան մարմինների կողմից օրենքի արդյունավետ կիրառումը չի ապահովվել: Չկար պատժամիջոցների բավարար մակարդակ, որը կապահովեր այս պահանջների կատարումը: Աշխատավայրերում պետական մակարդակով տեսչական ստուգումների անցկացման բացակայությունը խոչընդոտում է երեխայի աշխատանքի մասին դրույթների կիրարկմանը:

Ըստ Ազգային վիճակագրական ծառայության և Աշխատանքի միջազգային կազմակերպության պատրաստած «Հայաստան. երեխայի աշխատանքի ազգային հետազոտություն 2015թ.» վերլուծական զեկույցի՝ 5-17 տարեկան երեխաների 11.6 տոկոսն աշխատում են: Մեծ մասը ներգրավված են գյուղատնտեսության, անտառային տնտեսության և ձկնորսության ոլորտներում, իսկ մյուսներն աշխատել են առևտրի, նորոգման, փոխադրումների, պահեստավորման, կացության և հանրային սննդի ծառայությունների ոլորտում: Երեխաները զբաղվել են նաև շարժիչային վառելիքի, շինանյութի, դեղորայքի առևտրով, ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման աշխատանքներով: Հետազոտության տվյալների համաձայն զբաղված է եղել 39.300 երեխա, որոնցից 31.200-ը ներգրավված են եղել վնասակար աշխատանքում, մասնավորապես՝ վնասակար ոլորտներում (400 երեխա), վնասակար զբաղմունքներում (600 երեխա), երկար աշխատաժամերով աշխատանքներում (1.200 երեխա), ծանր բեռների փոխադրում մեծ հեռավորությունների վրա (17.200 երեխա) և վնասակար աշխատանքի այլ ձևերում (23.600 երեխա):

Տես նաև ԱՄՆ աշխատանքի դեպարտամենտի Մանկական աշխատանքի վատթարագույն ձևերի մասին բացահայտումները՝ www.dol.gov/ilab/reports/child-labor/findings/ էջում:

դ) Աշխատանքային կամ մասնագիտական խտրականություն

Սահմանադրությամբ արգելվում է խտրականությունը կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական հայացքներից, ազգային փոքրամասնությանը

պատկանելությունից, գույքային վիճակից, ծննդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից: Այլ օրենքներով ու կանոնակարգերով արգելվում է կոնկրետ աշխատանքային և մասնագիտական խտրականությունն ըստ սեռի: Կառավարությունն արդյունավետորեն չի ապահովել օրենսդրության կիրառումը: Չեն եղել արդյունավետ իրավական մեխանիզմներ ապահովելու այս կանոնակարգերի կիրառումը և եղել են աշխատանքային ու մասնագիտական խտրականության դրսևորումներ պայմանավորված սեռով, տարիքով, հաշմանդամության առկայությամբ, սեռական կողմնորոշմամբ, ՄԻԱՎ/ՁԻԱՀ ունենալու հանգամանքով և կրոնական պատկանելությամբ, թեև պաշտոնական կամ այլ վիճակագրություն այսօրինակ խտրականության ծավալների վերաբերյալ չի եղել: Գործող վարչական պատժամիջոցները բավարար չէին երևույթը կանխելու համար:

Ընդհանուր առմամբ կանայք չեն ունեցել մասնագիտական կամ աշխատավարձային նույն հնարավորությունները, ինչ տղամարդիկ, և հաճախ կատարել են որակավորում չպահանջող կամ ավելի ցածր վարձատրվող աշխատանքներ: Չնայած աշխատանքային օրենսգրքով աշխատանքային հարաբերությունների բոլոր կողմերի համար սահմանվում է «իրավահավասարություն», սակայն այն հավասար աշխատանքի համար հավասար վարձատրություն ապահովելու հստակ պահանջ չի դնում: 2016թ. Համաշխարհային բանկի կողմից ներկայացրած տվյալների համաձայն միջնակարգ կրթություն ունեցող կանանց մեկ երկրորդը և բարձրագույն կրթություն ունեցող կանանց մեկ երրորդը ներգրավված չեն վարձատրվող որևէ աշխատանքում: Համաշխարհային բանկի 2017թ. «Կանանց համար հավասար պայմանների ապահովում բնագիտության, տեխնոլոգիայի, ճարտարագիտության և մաթեմատիկայի (STEM) բնագավառներում» ուսումնասիրության համաձայն «երկրում կանանց և տղամարդկանց հավասարությանը խոչընդոտող ամենից նշանակալի գործոնն ազգային մշակույթում առկա կարծրատիպերն են՝ կանանց ընտանեկան պարտականությունների և այն մասին, թե ինչ տեսակի աշխատանք պետք է նրանք կատարեն»: Կանայք նաև մեծամասնություն էին կազմում գրանցված գործազուրկների շրջանում, իսկ աշխատանք գտնելու համար կանանցից ավելի երկար ժամանակ էր պահանջվում: ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի կատարած «Գենդերային հավասարության անհամապատասխանությունների ախտորոշիչ ուսումնասիրության» համաձայն, որը հրապարակվեց 2016թ. մարտին, կանանց ու տղամարդկանց աշխատավարձերի միջև անհամապատասխանությունը տնտեսության գրեթե բոլոր ոլորտներում կազմում էր շուրջ 36 տոկոս:

Շատ գործատուներ, ըստ հաղորդումների, խտրականություն են դրսևորում ըստ տարիքի և սեռի՝ հաճախակի թափուր տեղերի համար առաջադրելով պահանջներ սեռի, տարիքի ու արտաքին տվյալների վերաբերյալ: Չնայած որ խտրականության այս դրսևորումը բավական լայն տարածում ուներ, սակայն չկային հուսալի հետազոտություններ և իշխանությունները ոչ

մի գործողություն չէին ձեռնարկում այն մեղմելու համար: Լայն տարածում ունեին թափուր տեղերի մասին հայտարարությունները, որտեղ պահանջվում էին երիտասարդ, բարեսեու կանայք: Գործագուրկ դարձած աշխատողները, հատկապես՝ կանայք, 40 տարեկանից հետո շատ քիչ հնարավորություն ունեն իրենց կրթությանն ու հմտություններին համարժեք աշխատանք գտնել: ԼԳՖՏԻ անձինք, հաշմանդամություն ունեցող անձինք, ինչպես նաև հղի կանայք զբաղվածության հարցերում նույնպես հանդիպել են խտրականության: Կրոնական փոքրամասնությունների նկատմամբ խտրականություն է եղել պետական հիմնարկներում աշխատելու հարցում:

ե) Աշխատանքի ընդունելի պայմաններ

Ամսական նվազագույն աշխատավարձն աղքատության շեմից բարձր է: Օրենքով աշխատանքային շաբաթվա տևողությունը 40 ժամ է, և սահմանված է տարեկան 20 օր պարտադիր վճարովի արձակուրդ, ինչպես նաև փոխհատուցում արտաժամյա և գիշերային աշխատանքի դիմաց: Օրենքով նաև սահմանվում է, որ պարտադիր արտաժամյա աշխատանքը երկու հաջորդական օրվա ընթացքում չի կարող գերազանցել 4 ժամը, իսկ տարվա ընթացքում՝ 180 ժամը: Աշխատավայրում առողջության ու անվտանգության պահպանման ստանդարտները սահմանվել են կառավարության որոշմամբ:

Համապատասխան մարմինների կողմից այս ստանդարտների կիրառումն արդյունավետորեն չի ապահովվել ո՛չ օրինական, ո՛չ ստվերային ոլորտներում: Ըստ իրավաբանների աշխատողների իրավունքները շարունակել են մնալ չպաշտպանված՝ պայմանավորված աշխատանքային տեսչական ստուգումների կայուն ռեժիմի բացակայությամբ, անկախ արհմիությունների բացակայությամբ և վարչական դատարանների գերբեռնվածությամբ, որտեղ նոր գործերին ընթացք է տրվում դրանց ընդունումից հետո ավելի քան մեկ տարի անց:

Մասնավոր ոլորտի շատ աշխատողներ, հատկապես սպասարկման և մանրածախ ծառայությունների ոլորտում չեն կարողացել օգտվել վճարովի արձակուրդից ու նրանցից պահանջվել է աշխատել օրական 8 ժամից շատ ավել՝ առանց վարձատրության: Ըստ որոշ զբաղվածության գործակալությունների ներկայացուցիչների շատ գործատուներ աշխատողներին ընդունել են 10-30 օր չձևակերպված ոչ վճարովի «փորձաշրջանով»: Այնուհետև հաճախ այս աշխատողներին արձակել են, բայց, քանի որ այս նախնական աշխատանքն օրինականորեն ձևակերպված չէր, նրանք չեն կարողացել պահանջել աշխատած օրերի վճարը:

Որոշ աշխարհագրորեն աղքատ բնակավայրերում հիմնական գործատու հանդիսացող ձեռնարկությունների կառավարիչները հաճախ օգտվելով այլ աշխատանք չլինելու հանգամանքից չեն ապահովել համարժեք վարձատրության, աշխատանքի անվտանգ պայմաններ և քայլեր չեն ձեռնարկել բնապահպանական մտահոգությունների հետ կապված:

Երկրի բոլոր աշխատողների շուրջ կեսն աշխատանք է գտել ստվերային ոլորտում, որտեղ նրանք խոցելի են գործատուների չարաշահումների տեսանկյունից և չունեն պետական պաշտպանություն: Ըստ լրատվամիջոցների հաղորդումների նոր կառավարության հակակոռուպցիան քայլերից հետո խոշոր սուպերմարկետների ցանցերում սկսեցին աշխատողներին պաշտոնապես գրանցել, ինչը հանգեցրեց գրանցված աշխատողների թվի կտրուկ ավելացման՝ առանց նոր աշխատողներ ընդունելու:

Նոյեմբերի 30-ին «Հայաստանի հելսինկյան կոմիտե» ՀԿ-ի կողմից ներկայացվեցին հանրակրթական դպրոցների ուսուցիչների աշխատանքային իրավունքների մասին հետազոտության տվյալները, որն իրականացվել էր 2017թ. հոկտեմբերից մինչև 2018թթ. մայիսն ընկած ժամանակահատվածում: Այն մատնանշում էր աշխատանքային պայմանների հետ կապված խնդիրներ, մասնավորապես՝ անվտանգ ու առողջության համար անվնաս աշխատանքային պայմանների ապահովման մասով: Որոշ ուսուցիչներ նշում էին, որ պաշտպանված չեն հոգեբանական ճնշումներից, որ գալիս են իրենց տնօրինության ու ծանոթությամբ ընդունված ուսուցիչների կողմից: Ուսուցիչների գրեթե կեսը դպրոցի համար աշակերտներ հայթայթելու աշխատանքների մեջ է ներգրավվել, մի մասն էլ ապահովել է աշակերտների մասնակցությունը քաղաքական միջոցառումներին կամ հավաքներին: Ուսուցիչների ճնշող մեծամասնությունը երբևէ չի համախմբվել մի խնդրի շուրջ, որի նպատակն էր իրենց ձայնը լսելի դարձնել: Հարցված ուսուցիչների զգալի մասն արհեստակցական միությանը ոչ մի հարցով չի դիմել, չնայած նրանց զգալի մասն արհմիության անդամ է, քանի որ անդամակցությունը պարտադիր է եղել: Ըստ ուսուցիչների՝ իրենց դպրոցներում առավել քիչ պաշտպանված են կրոնական փոքրամասնությունների ներկայացուցիչ, ԼԳԲՏԻ և նախկին դատապարտյալ ուսուցիչները:

Հունիսի 4-ին աղբահանություն իրականացնող Սանիտեք ընկերության գիշերային հերթափոխում ներգրավված մի խումբ կին աշխատողներ նամակ ուղարկեցին վարչապետին՝ հայտնելով, որ ընկերությունը խախտել է իրենց աշխատանքային պայմանագրերը, շահագործել իրենց և չարաշահել իրենց աշխատանքային ժամերը: Ըստ նամակի գիշերը 8 ժամ աշխատած աշխատակիցները չէին ստացել պայմանագրով սահմանված իրենց աշխատավարձը, չէին կարողացել օգտվել ամենամյա արձակուրդից կամ ամսվա ընթացքում նախատեսված 4 հանգստյան օրվա իրավունքից, չէին իմացել, թե ինչքան տարածք պետք է մաքրվի իրենց կողմից և չէին ստացել գիշերային աշխատանքի համար նախատեսված լրավճար: Թեպետ տարիների ընթացքում գրանցվել են հետևողական հաղորդումներ Սանիտեք ընկերությունում աշխատանքային իրավունքների խախտումների մասին, սակայն պատկան մարմինների կողմից տույժերի կիրառման կամ Սանիտեքի կողմից աշխատանքային պայմանները բարելավելու փորձեր չեն կատարվել: Շատ ոլորտներում անվտանգ ու առողջության համար անվնաս աշխատանքային պայմանները շարունակել են չհամապատասխանել ստանդարտներին, իսկ պաշտոնական տեղեկատվության համաձայն

տարվա առաջին ինն ամիսների ընթացքում գրանցվել է մահվան ելքով 23 աշխատանքային պատահար: Հաշվի առնելով երկրում տիրող գործազրկության բարձր մակարդակը՝ աշխատողները սովորաբար չեն թողնում այնպիսի աշխատանքները, որտեղ առողջության կամ անվտանգության համար վտանգավոր իրավիճակներ կան: Նման իրավիճակներում համապատասխան մարմինների կողմից աշխատողներին պաշտպանություն չի ապահովվում, իսկ վերջիններս էլ սովորաբար իրենց իրավունքների խախտումների մասին հաղորդումներ չեն ներկայացնում:

Մեկ ուրիշ դեպքում էլ հանքարդյունաբերական ընկերության աշխատողներն ու կապալառուները հայտնվել էին մի իրավիճակում, երբ ցուցարարների կողմից ճանապարհները փակելու պատճառով չէին կարող կատարել իրենց աշխատանքը: Ամիսներ շարունակ ճանապարհները փակ պահելու արդյունքում ընկերությունը դադարեցրեց աշխատանքները, որի հետևանքով աշխատանքից դուրս մնացին մոտ 1.400 աշխատող և կապալառու: